

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԵՐՁԱԿ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՏԴ 687.3 02

ԳՄԴ 37.24-2

Վ 301

Հաստատված է ՀՀ ԿԳ նախարարի՝
24.10.2014 թ. թիվ 1045-Ա/Ք հրամանով

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ

Դերձակ մոդելավորող /Ք. Վարդանյան.- Եր.: Կրթության ազգա-
Վ 301 յին ինստիտուտ, 2014. – 120 էջ:

ՀՏԴ 687. 03

ԳՄԴ 37.24-2

ISBN 978-9939-73-001-1

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն ձեռնարկը ներառում է երեք գլուխներ՝ «Կնոջ վերնաշապիկ և բլուզ», «Կնոջ շրջագգեստ» և «Մանկական թեթև հագուստ», որոնք առնչվում են ժամանակակից դերձակ-մոդելավորող մասնագիտությանը: Դրանք կազմված են ուսումնական ծրագրին համապատասխան: Ձեռնարկը նախատեսված է նախնական /արհեստագործական/ կրթական հաստատությունների ուսանողների համար:

Դերձակ-մոդելավորող մասնագիտության բնագավառում և ուսանողների հետ աշխատանքի երկարատև փորձը մեզ բերեց այն համոզման, որ իրականում կա՛մ չկա նշված ոլորտին առնչվող մասնագիտական գրականություն, ինչն ուսանողին կապահովեր անհրաժեշտ գիտելիքներով, կամ կան խորհրդային ժամանակաշրջանից մնացած մի քանի՝ ոչ մայրենի լեզվով գրված ձեռնարկներ, որոնք մատչելի չեն ուսանողների համար: Վերը նշվածը համարելով հիմնական նպատակ՝ հիմք դրվեց սույն ձեռնարկի ստեղծմանը:

«Կնոջ վերնաշապիկ» գլուխն ընդգրկում է կնոջ վերնաշապիկի առաջացման պատմությունը, կնոջ վերնաշապիկի կամ բլուզի նախագծումը և էսքիզավորումը, վերնաշապիկի և բլուզի հիմքի կառուցումը, բազկակալի մշակման հաջորդականությունը, կանգունակով օձիքի մշակման հաջորդականությունը և հիմնական հիմքի վրա մոդելավորումը:

«Կնոջ շրջագգեստ» գլուխն իր մեջ ներառում է կնոջ շրջագգեստի առաջացման պատմությունը, հիմքի կառուցումը, հիմքի վրա մոդելավորումը և գաղտնի շղթայի մշակման հաջորդականությունը:

«Մանկական թեթև հագուստ»: Այս գլխում ամփոփված նյութերի ներկայացման նպատակն է՝ սովորողի մեջ ձևավորել տարբեր տարիքային խմբերի երեխաների համար մանկական զգեստներ կարելու կարողություն: Այն ներառում է «Մանկական կիսաշրջագգեստ», «Նախադպրոցական տարիքի շրջագգեստ», «Դպրոցական տարիքի տղայի տաբատ», «Դպրոցական տարիքի տղայի վերնաշապիկ», «Բաճկոնակ» և «Վրադիր տերևիկով գրպանի մշակման հաջորդականությունը» թեմաները:

Յուրաքանչյուր թեմայի վերջում առկա են հարցեր և առաջադրանքներ, որոնք կարող են ծառայել և՛ որպես ինքնաստուգում, և՛ հիմք՝ թեստային աշխատանքների համար:

Ստանալով որոշակի կրթություն և կատարելագործելով մասնագիտական կարողությունները՝ կարելի է դառնալ լայն պրոֆիլ ունեցող դերձակ-մասնագետ:

Հարգելի՛ ընթերցողներ, եթե դուք որոշել եք ձեռք բերել դերձակ մասնագիտություն, ապա այս ձեռնարկը օգտակար կլինի ձեզ համար:

Հույս ունենք, որ սույն ձեռնարկը կծառայի իր նպատակին և օգտակար կլինի ոչ միայն ուսանողներին, այլև ուսուցչադասախոսական անձնակազմին:

ԳԼՈՒԽ 1

ԿՆՈՋ ՎԵՐՆԱՇԱՊԻԿ

1.1. Վերնաշապիկի առաջացման պատմությունը



Վերնաշապիկի մասին առաջին հիշատակումներն արձանագրվել են մ.թ.ա 3-րդ հազարամյակում, Եգիպտոսում: Այդ ժամանակաշրջանում վերնաշապիկի ուտերը և թևերը ձեռքով ծալված էին և հարթեցված՝ տալով մարմնին ազատություն: Միջնադարում վերնաշապիկն օգտագործվում էր բացառապես որպես ներքնազգեստ:



Վերնաշապիկն իր ժամանակակից տեսքով ի հայտ է եկել կնոջ զգեստապահարանում 1860-ական թվականներին: Առաջին անգամ հանրության մեջ վերնաշապիկ կրել է ֆրանսիացի կայսրուհի Եվգենիան:

Մինչև ուշ միջնադար, վերնաշապիկներն առանց օձիք էին: Սկսած 13-րդ դարից՝ վզափորվածքի մոտ հայտնվեցին նեղ շերտակտորներ: 14-15-րդ դարերում տարածված էին նեղ կանգունակ-օձիքներով վերնաշապիկները, որոնք վաղուց տարածված էին արևելքում:



16-րդ դարում իսպանացի ֆեոդալները սկսեցին ձևափոխել օձիքը, որպեսզի վերջինիս միջոցով ընդգծեն իրենց ազնվականությունը: Վերնաշապիկներին գեղեցիկ տեսք հաղորդեցին ժանյակները 16-րդ դարի սկզբներին:

Աստիճանաբար վերնաշապիկների նման բազմազանությունը կորցրեց իր համբավը, և գրեթե երկու դար հետո զուսպ անգլիացիներն աշխարհին ներկայացրին վերնաշապիկի նոր մոդել՝ սպիտակ գույնի վերնաշապիկներ կանգունակ-օձիքով և առանց զարդարանքի:

Այսօր կանայք կրում են բազմազան ու բազմաոճ վերնաշապիկներ և՛ աշխատանքի վայրում, և՛ գործնական հանդիպումների ժամանակ, և՛ ազատ ժամանակ:

Ժամանակակից կնոջ զգեստապահարանում վերնաշապիկները կարող են լինել ամենատարբեր ոճերի և երանգների: Նախկինի պես նորաձև են համարվում պաստելային երանգների, ինչպես նաև սպիտակ վերնաշապիկները՝ մանր գծերով և վանդակներով:

Վերջին ժամանակաշրջանում լայն տարածում են գտել կիսաթափանցիկ վերնաշապիկ-բլուզները մետաքսից կամ շիֆոնից, երկաթե կոճակներով, ինչպես նաև անթև վերնաշապիկները, որոնք հիանալի համադրվում են ջինսե տաբատների հետ:

Գրասենյակային հագուստի անփոխարինելի տարրերակներ են փափուկ բամբակյա վերնաշապիկները: Այդպիսի վերնաշապիկները չունեն ծալքեր, և ճիշտ է դրանք կրել տաբատի

կամ կիսաշրջազգեստի մեջ դրած:

Վերնաշապիկները հիմք ծառայեցին այսպես կոչված վերնաշապիկ-շրջազգեստների ստեղծման համար:




Մի քանի խորհուրդ այն մասին, թե ինչպես կարելի կրել ժամանակակից վերնաշապիկները

- ✓ Վերնաշապիկի թևի երկարությունը պետք է լինի մինչև դաստակ: Վերջին ժամանակաշրջանում նորաձև են նաև այսպես կոչված թևերի 3/4 երկարությամբ վերնաշապիկները:
- ✓ Վերնաշապիկի երկարությունը չպետք է լինի կոնքերի մակարդակից ներքև:
- ✓ Ժամանակակից վերնաշապիկը չպետք է շատ կիպ ընդգրկի մարմինը. մարմնի և կտորի միջև հեռավորությունը պետք է շսմ-ից պակաս չլինի, որպեսզի մարմինը շնչի և շարժումները սահմանափակված չլինեն:
- ✓ Եթե դուք գեր եք, ապա պետք է ընտրեք ավելի ազատ վերնաշապիկ՝ կրծքի մասում մի փոքր լայնացող: Խորհուրդ չի տրվում հագնել կրծքի տակի հատվածում սեղմոններով վերնաշապիկներ, այն ավելի կընդգծի ձեր կառուցվածքի թերությունները:
- ✓ Սպիտակ վերնաշապիկները չի կարելի վաճառել չորացնող լվացքի մեքենայով, քանի որ տաք օդից այն շատ շուտ կդեղնի:
- ✓ Համադրելով վերնաշապիկը տաբատների կամ կիսաշրջագգեստների հետ՝ պետք է ուշադրություն դարձնել գունային գամմային. եթե վերնաշապիկը վառ գույների մեջ է, ապա տաբատը կամ կիսաշրջագգեստը պետք է լինի ավելի չեզոք գույների:
- ✓ Դասական վերնաշապիկը հիանալիորեն համադրվում է նաև ջինսե տաբատների հետ:

Հետաքրքիր փաստեր


- 2012 թվականին Ամերիկայի Ռինո քաղաքում հերթական տարեկան Coeur d'Alene Art Auction աճուրդի ժամանակ 877,500 դոլարով վաճառվել է հնդկական ցեղախմբի առաջնորդի վերնաշապիկը (1840-1904):
- Տղամարդու վերնաշապիկի կնոջ տարբերակը լայն տարածում գտավ 20-րդ դարի սկզբներին՝ կնոջ իրավունքների պայքարի և ազատագրման ժամանակաշրջանում:
- Ի սկզբանե վերնաշապիկը եղել է ներքնագգեստ, իսկ սպիտակ գույնը պատահական չէր. այն խորհրդանշում էր մարդու հոգևոր մաքրությունը, այդ իսկ պատճառով կրում էին մարմնի վրա: Այստեղից էլ եկել է մկրտության ժամանակ մաքուր սպիտակ վերնաշապիկ կրելու ավանդույթը: Այդպես էր նաև մարտի ժամանակ: Դատարանում դարեր շարունակ մեղադրյալներին նույնպես հագցնում էին սպիտակ վերնաշապիկներ:
- Իտալացի մոդելավորող Ստեֆանո Ռիչին արտադրում է ամենաթանկարժեք վերնաշապիկներ, որոնց արժեքը սկսվում է 2000 դոլարից: Այդպիսի վերնաշապիկները կշռում են ընդամենը 130 գրամ: Դրանցից տարեկան արտադրվում է ընդամենը 240 հատ:

1.2. Կնոջ վերնաշապիկի և բլուզի էսքիզավորում և նախագծում




Էսքիզ (ֆրանսերեն՝ esquisse) բառը ֆրանսիական ծագում ունի և նշանակում է հագուստի, գեղարվեստական գործերի կամ առանձին դետալների նախնական ուրվագծում: Էսքիզը արագ կատարված ազատ նկար է, որը չի ենթադրում պատրաստի աշխատանք: Հաճախ այն կազմված է բազմաթիվ գծերից: Էսքիզավորման միջոցով հեշտ է ներկայացնել մտքում եղած ցանկացած մոդել:

Նախնական ուրվագծումը հագուստի մշակման գործում կարևոր փուլ է: Այն ենթադրում է տեղեկատվության հավաքում, վերլուծություն, ստեղծագործ մտքից եկող յուրօրինակ մոդելի բացահայտում: Կուտակված տեղեկատվության ուսումնասիրման արդյունքում նկարիչ-մոդելավորողի մոտ ի հայտ է գալիս նախագծվող հագուստի օրինակը կամ ամբողջ հավաքածուն, որը նա վերածում է ուրվագծի: Այսպիսով, էսքիզավորումը մոդելավորման գրաֆիկական փուլն է, որը պահանջում է գրաֆիկական իմացության բավարար մակարդակ: Մշակելով էսքիզները՝ նկարիչ-մոդելավորողը դիմում է տարբեր հնարների, որոնց միջոցով էսքիզները դառնում են գեղարվեստորեն առավել արտահայտիչ: Էսքիզավորման համար լավագույն միջոցներից են գրաֆիկական միջոցները,



ինչպիսիք են՝ մատիտը, թանաքը, յուղամատիտները, ներկերը (ջրաներկ, գուաշ), գունավոր թղթերը ապլիկացիաներ անելու համար:

Յուրաքանչյուր գրաֆիկական տեխնիկա ապահովում է հագուստի երևակայական մտքի յուրօրինակ արտահայտման ձև, օրինակ՝ ջրաներկը ենթադրում է գործվածքի թավշյա կամ փափուկ լինելը, չոր վրձինը ստեղծում է չոր մորթու տպավորություն:



Կանացի վերնաշապիկի և բլուզի նախագծում

Կարևոր է

Նախքան նախագծմանն անցնելը, անհրաժեշտ է կատարել չափումներ:

Ինչպե՞ս կատարել մարմնաչափում

Նախքան չափեր վերցնելն անհրաժեշտ է կրել ներքնազգեստ: Չափումների ժամանակ պետք է կանգնել առանց լարվելու և ոտքը թեքելու:

Կրծքի շրջագիծ


Այս չափումը վերցնում ենք կրծքի ամենաբարձ կետերից: Սանտիմետրային ժապավենը ոչ պետք է շատ ձգել, ոչ էլ թույլ թողնել:


Գոտկատեղի շրջագիծ

Վերցնել չափերը իրանի ամենանեղ տեղից:

Կոնքի շրջագիծ

Չափումը վերցնում ենք նստատեղի ամենաուռուցիկ կետերից:





Կրծքի բարձրություն

Չափսը պետք է վերցնել վզի անցումային կետից՝ ուսի հիմքից, մինչև կրծքի ամենաբարձ կետը:

Առաջամասի երկարություն

Առաջամասի երկարությունը մինչև գոտկատեղ վերցնում ենք վզի անցումային կետից (ուսի հիմքից)՝ տանելով կրծքի ամենաբարձր կետով մինչև իրան:

Հագուստի երկարություն

Այս չափսը վերցնում ենք գոտկատեղից մինչև մեր ուզած երկարություն:

Մեջքի երկարություն մինչև գոտկատեղ


Չափումները կատարվում են յոթերորդ ողից մինչև գոտկատեղ:

Ուսի լայնություն

Այս չափումները վերցնում ենք հորիզոնական գծով, մեկ ուսագլխից դեպի մյուս ուսագլուխը:

Մեջքի լայնություն

Չափումը վերցնում ենք հորիզոնական, թիակների մեջտեղով:



Ուսի երկարություն

Այս չափումը վերցնում ենք վզի հիմքից մինչև ուսի վերին կետը:

Թևի երկարություն


Չափսը վերցնում ենք ուսի վերին կետից մինչև դաստակը՝ թեթև ծալած արմունկով:

Բազուկի շրջագիծ

Չափումները վերցնում ենք հորիզոնական՝ թևի ամենալայն մասից:

Դաստակի շրջագիծ


Չափումները վերցնում ենք հորիզոնական, թևի ամենաներքևի մասից:



Թևատակի խորություն

Թևատակի խորությունը հաշվում են բանաձևով՝ $\text{Թև} = 1/10 \text{ կրծքի շրջագիծ} + (10,5 - 12 \text{ սմ})$: Սակայն որպեսզի ստուգել հաշվարկի ճիշտ լինելը կարելի է չափել թևատակի խորությունը:

Դրա համար վերցրեք թղթե ժապավեն և սեղմեք թևի տակ, հետևից չափեք թևատակի խորությունը յոթերորդ ողից մինչև թղթի գիծ: Եթե բանաձևային հաշվարկը և չափման տվյալները տարբեր են, պետք է վերցնել այդ երկու տվյալներից միջինը:






1.3. Կնոջ բլուզի (վերնաշապիկի) հիմքի և ձևաթղթերի կառուցում

Այս վերնաշապիկը ուղիղ, ազատ ոճի, առանց կրծքի տակի սեղմոնների վերնաշապիկ է:

Կանացի բլուզի գծագիր



Նկ.1. Կանացի բլուզի հիմքի գծագիրը

Գծագիրը համապատասխանում է 48 չափին:

Անհրաժեշտ չափումներն են.

- ✓ Մեջքի երկարություն՝ մինչև գոտկատեղ - 38սմ
- ✓ Ուսի երկարություն - 13սմ
- ✓ Պարանոցի կիսաշրջագիծ - 18սմ
- ✓ Կրծքի բարձրության կիսաշրջագիծ - 44սմ
- ✓ Կրծքի կիսաշրջագիծ - 48սմ
- ✓ Կոնքի կիսաշրջագիծ - 50սմ
- ✓ Թևի երկարություն - 58սմ
- ✓ Դաստակի կիսաշրջագիծ - 9սմ

Ցանցի կառուցում

Գծագրենք ABCD ուղանկյունը, ինչպես ցույց է տրված նկար 1-ում:

Վերնաշապիկի լայնությունը: Ուղղանկյան AB և DC կողմերը հավասար են 53 սմ (կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 5սմ)՝ $48+5=53$:

Վերնաշապիկի երկարությունը: Ուղղանկյան AD և BC կոմդերը հավասար են 56 սմ (մեջքի երկարություն մինչև գոտկատեղ՝ գումարած 18սմ բոլոր չափերի համար)՝ $38+18=56$:

Թևատակի խորությունը: A կետից ներքև չափել 20սմ և նշանակել Դ տառով՝ $48:3+4=20$ (1/3 կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 4սմ բոլոր չափերի համար): Դ կետից դեպի աջ տանում ենք ուղիղ գիծ մինչև BC գծի հետ հատվելը. հատման կետը նշանակում ենք Դ1 տառով:

Գոտկատեղի գիծ: A կետից ներքև չափում ենք 38սմ (մեջքի երկարությունը մինչև գոտկատեղ) և նշանակում T տառով: T կետից դեպի աջ տանում ենք ուղիղ գիծ մինչև BC գծի հետ հատվելը և հատման կետը նշանակում ենք T1 տառով:

Վերնաշապիկի հետևամասի կառուցում

Վերնաշապիկի մեջքի լայնությունը: Դ կետից աջ չափում ենք 19սմ և նշանակում Դ2 տառով (1/3 կրծքի կիսաշրջագիծ գումարած 3սմ բոլոր չափերի համար)՝ $48:3+3=19$: Դ2 կետից դեպի վերև մինչև AB գծի հետ հատվելը տանում ենք ուղիղ գիծ և նշանակում Ո տառով:

Վերնաշապիկի թևատակի լայնությունը: Դ2 կետից դեպի աջ չափում ենք 12սմ և նշանակում Դ3 տառով (1/4 կրծքի կիսաշրջագիծ)՝ $48:4=12$:

Վերնաշապիկի առաջամասի բարձրությունը: Դ1 կետից վերև չափում ենք 24,5 սմ և նշանակում Լ1 տառով ($1/2$ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 0,5սմ բոլոր չափերի համար)՝ $48:2+0,5=24,5$ սմ:

Դ3 կետից վերև նույնպես չափում ենք 24,5սմ և նշանակում Դ1 տառով, իսկ AB գծի հետ հատման կետը նշանակում ենք Դ2 տառով: Դ1 և Լ1 կետերը միացնում ենք իրար:

Վերնաշապիկի կողային գիծ: Դ2Դ3 բաժանում ենք երկու հավասար մասի և նշանակում Դ4 տառով:

Դ4 կետից դեպի ներքև տանում ենք ուղիղ գիծ մինչև DC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակում ենք H կետով, իսկ TT1 գծի հետ հատման կետը նշանակում ենք T2 տառով:

Ուսի և թևատակի օժանդակ գծեր: ԴԴ2 և Դ2Դ3 գծերը բաժանում ենք չորս հավասար մասերի:

Վերնաշապիկի թևատակի իջեցում: ԴԴ2 և Դ2Դ3 գծերը դեպի ներքև երկարացնում ենք 1 սանտիմետրով: 1 կետերը միացնում ենք իրար:

Վերնաշապիկի վզափորվածք

A կետից աջ չափում ենք 6,5 սանտիմետր ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ՝ գումարած 0,5սմ բոլոր չափերի համար)՝ $18:3+0,5=6,5$ սմ: 6,5 կետից վերև չափում ենք 1,5 սանտիմետր, իսկ 1,5 կետից վերև՝ 1սանտիմետր: A և 1 կետերը միացնում ենք իրար սահուն կոր գծով:

Ուսի թեքություն: Դ կետից ներքև չափում ենք 2 սանտիմետր:

Ուսի գիծ: 1,5 կետից (վզափորվածք) 2 կետով (ուսի թեքություն) տանում ենք ուսի գիծը՝ 14 սանտիմետր երկարությամբ (ուսի երկարություն՝ գումարած 1սմ բոլոր չափերի համար)՝ $13+1=14$ սմ:

Թևատակի գիծ: 1 կետից վերև, անկյունը բաժանելով երկու մասի, չափում ենք 3սմ: Թևատակի գիծը սկսում է 14 կետից, անցնում ԴԴ2 գծի մեջտեղի բաժանման կետով դեպի 3 և Դ4 կետեր:

Վերնաշապիկի կողային գիծ: T2 կետից դեպի ձախ չափում ենք 2 սանտիմետր: Կողային գիծն անցնում է Դ4, 2 կետերով դեպի H կետ:

Վերնաշապիկի առաջամասի կառուցում

Վերնաշապիկի վզափորվածք: Լ1 կետից ձախ չափում ենք 6,5սմ և նշանակում Լ1 տառով ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ գումարած 0,5սմ բոլոր չափերի համար)՝ $18:3+0,5=6,5$ սմ: Լ1 կետից ներքև չափում

ենք 7,5սմ (1/3 պարանոցի կիսաշրջագիծ՝ գումարած 1,5 սանտիմետր բոլոր չափերի համար)՝ $18:3 + 1,5 = 7,5$ սմ:

Մ1 և 7,5 կետերը կետագծերով միացնում ենք իրար և բաժանում երկու հավասար մասի. Մ կետից դեպի կետագծի բաժանման կետը չափում ենք 6,5սմ: Մ1, 6,5 և 7,5 կետերը միացնում ենք իրար՝ կոր գծով:

Ուսի երկարություն վզափորվածքից մինչև կրծքի սեղմոն: Մ1 կետից ձախ չափում ենք 4 սանտիմետր, այնուհետև ներքև՝ 1 սանտիմետր: Մ1 և 1 կետերը միացնում ենք: Դ1 կետից ձախ չափում ենք 9,5 սանտիմետր (վզափորվածք՝ գումարած ուսի երկարություն վզափորվածքից մինչև կրծքի սեղմոն, հանած 1սանտիմետր)՝ $6,5 + 4 - 1 = 9,5$ սմ: 1 և 9,5 կետերը միացնում ենք իրար:

Կրծքի սեղմոն: Սեղմոնի աջ գիծը 1 կետից մինչև 9,5 կետը բաժանում ենք երկու հավասար մասի, բաժանման կետից ձախ չափում ենք 4 սանտիմետր (կրծքի կիսաշրջագիծ՝ հանած կրծքի բարձրության կիսաշրջագիծ)՝ $48 - 44 = 4$: Սեղմոնի ձախ գիծը տանում ենք 9,5 և 4 կետերով սեղմոնի աջ գծի երկարության չափով և նշանակում Ո3 տառով:

Ուսի երկարությունը կրծքի սեղմոնից մինչև թևատակ: Ո3 կետը ՈԴ2 գծի (հետևամաս) բաժանման կետերից միացնում ենք վերին կետին: Այնուհետև Ո3 կետից ձախ կետագծերով տեղադրում ենք 9 սմ (ուսի երկարություն՝ հանած 4 սանտիմետր, ուսի երկարություն՝ վզափորվածքից մինչև սեղմոն)՝ $13 - 4 = 9$ սմ: 9 կետը կետագծերով միացնում ենք Ո2Դ3 գծի բաժանման կետերից ստորին կետին: Այնուհետև 9 կետից ներքև չափում ենք 2 սանտիմետր դեպի ներքև և միացնում Ո3 կետին:

Թևատակի գիծ: 2 կետից կետագծերով Ո2Դ3 գծի բաժանման ստորին կետին միացված գիծը բաժանում ենք երկու հավասար մասի և բաժանման կետից դեպի աջ չափում 1 սանտիմետր: Այնուհետև 1 կետից, կիսելով անկյունը երկու հավասար մասի, չափում ենք 2 սանտիմետր: Թևատակի գիծն անցնում է ուսի 2 կետից 1 կետով, Ո2Դ3 գծի բաժանման ստորին կետով, 2 կետով հավելվելով Դ4 կետին:

Վերնաշապիկի կողային գիծ: T2 կետից աջ չափում ենք 2 սանտիմետր: Կողային գիծն անցնում է Դ4, 2 կետերով դեպի H կետ:

Վերնաշապիկի գոտկատեղի ձևավորում: T1 կետից ներքև չափում ենք 2 սանտիմետր և միացնում կողային գծի 2 կետին:

Վերնաշապիկի կոնքի գծի ձևավորում: C կետից BC գիծը երկարացնում ենք 2 սանտիմետր և նշանակում H1 տառով: H և H1 կետերը միացնում ենք իրար:

Վերնաշապիկի կոճկեւատեղի հավելում: Վզափորվածքի 7,5 և H1 կետից աջ չափում ենք 1,5-ական սանտիմետր: 1,5 կետերը միացնում ենք իրար ուղիղ գծով և, երկարացնելով դեպի վերև 1սմ, միացնում ենք 7,5 կետին: Ավելացնում ենք ևս 3 սանտիմետր կոճկեւատեղի մշակման համար:

Վերնաշապիկի երկարությունը գոտկատեղից մինչև ներքև հավասար է 18 սանտիմետր: Կարելիս երկարությունը գոտկատեղից դեպի ներքև կարելի է վերցնել նաև 12-15 սանտիմետր:

Կարևոր է

Եթե կոնքի կիսաշրջագիծն ավելի մեծ է, քան գծագրում է, ապա փարբերության կեսն ավելացնում ենք առաջամասին, կեսը՝ հետևա-մասին:

1.4. Մեկ կարանի թևի և կանգունակով օձիքի գծագրեր Հիմքի կառուցում


Այս մեկ կարանի թևի ձևաթուղթը կարելի է օգտագործել կնոջ՝ գոտկատեղից վերև բոլոր տեսակի հագուստների համար՝ վերարկու, բաճկոն, զգեստ կամ բլուզ:

Մեկ կարանի թևի գծագիր

Ձևաթղթի կառուցման համար անհրաժեշտ է օգտվել վերնաշապիկի համար վերցրած չափումներից:

- ✓ Մեջքի երկարություն մինչև գոտկատեղ - 38սմ
- ✓ Ուսի երկարություն - 13սմ
- ✓ Պարանոցի կիսաշրջագիծ - 18սմ
- ✓ Կրծքի բարձրության կիսաշրջագիծ - 44սմ
- ✓ Կրծքի կիսաշրջագիծ - 48սմ
- ✓ Կոնքի կիսաշրջագիծ - 50սմ
- ✓ Թևի երկարություն - 58սմ
- ✓ Դաստակի կիսաշրջագիծ - 9սմ

Ցանցի կառուցում.



Նկ. 1: Թևի գծագիր

Գծագրենք ABCD ուղղանկյունը:

Ցանցի լայնություն: Ուղղանկյան AB և DC կողմերը հավասար են 34 սանտիմետրի (1/3 կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 1սմ (հավելում)՝ բազմապատկած երկուսով, բոլոր չափերի համար)՝ $(48:3+1) \times 2=34$ սմ:

Կարևոր է

Հավելումը կարելի է մեծացնել 1,5-ից մինչև 3սմ՝ կախված թևի վերևի մասի շրջագծի մեծությունից:

Ցանցի երկարություն: Ուղղանկյան AD և BC կողմերը հավասար են 58 սանտիմետրի (թևի երկարություն՝ ըստ չափումների):

Թևազվիսի բարձրություն: A կետից ներքև չափում ենք 15 սանտիմետր և նշանակում Ռ տառով (3/4 սեղմոնով վերնաշապիկի թևատակի խորություն)՝ 20:4X3=15սմ:

Ռ կետից աջ տանում ենք ուղիղ գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակում ենք Ռ1 տառով:

Թևի օժանդակ գծեր: AB հատվածը բաժանում ենք չորս հավասար մասի: Բաժանման միջին կետը նշանակում ենք O տառով, իսկ ձախ և աջ բաժանման կետերը նշանակում ենք O1 և O2 տառերով: O, O1, O2 կետերից տանում ենք ուղիղ գծեր մինչև DC ուղղի հետ հատվելը, իսկ հատման կետերը նշանակում ենք H, H1, H2 տառերով:

Թևազվիսի կորության գիծ: Ռ, O, ինչպես նաև O, Ռ1 կետերը միացնում ենք իրար կետագծերով: Օժանդակ գծերի հետ կետագծերի հատման կետերը նշանակում ենք O3 և O4 կետերով: Այնուհետև բոլոր կետագծերով հատվածները (օժանդակ գծերի արանքում գտնվող) բաժանում ենք հավասար մասերի: Բաժանման կետերից ներքև՝ ուղիղ անկյան տակ չափում ենք՝ ՌO3-ից ներքև 0,5սմ, O3O վերև 2սմ, O4-ից վերև 1,5սմ, O4Ռ1-ից ներքև 2 սանտիմետր: O3 կետից վերև չափում ենք 1,5 սմ և նշանակում O5 տառով: Թևազվիսի գիծը անցնում է Ռ, O,5, O5, 2, O, 1,5, O4, 2, Ռ1 կետերով, իսկ O կետը թևի ամենաբարձր կետն է:


Կտրվածք կոնկման համար: H կետից ձախ չափում ենք 2սմ, իսկ վերև՝ 10սմ:

Կարճ թև: O կետից ներքև չափում ենք 18-26սմ: Նշված կետով տանում ենք ուղիղ գիծ մինչև AD և BC գծերի հետ հատվելը:

Խորհուրդ

Թևի գծագիրը պատրաստ լինելուց հետո պետք է չափել թևազվիսի երկարությունը Ռ կետից O կետով դեպի Ռ1 կետ: Նման ձևով պետք է չափել նաև առաջամասի և հետևամասի թևատակի երկարությունը՝ համեմատելու համար: Թևազվիսի երկարությունը պետք է լինի 1-2,5 սմ երկար թևատակի երկարությունից (թևը նստեցնելու համար): Հակառակ դեպքում պետք է հավելումը ավելացնել կամ պակասեցնել:

Ներքևի մասում նեղացող թևի գծագիր



Նկ. 2. Ներքևի մասում նեղացող թևի գծագիր

Ներքևի մասում թևի լայնությունը կախված է մոդելի ընտրությունից և կարող է տարբեր լինել: Ներքևի մասում թևը կարելի է նեղացնել այնպես, ինչպես ցույց է տրված նկար 2-ում:

Կոճկման համար նախատեսված կտրվածք: Կտրվածքի տեղը որոշվում է հետևյալ կերպ. թևի ներքևի հատվածը բաժանում ենք չորս հավասար մասի, կտրվածքը տեղադրում ենք կարին մոտ՝ դեպի հետևամաս: Կտրվածքի երկարությունը կախված է մոդելից, սակայն որպես կանոն, 10 սմ է:


Բազկակալի գծագրի կառուցում

Գծել ABCD ուղղանկյունը:

Բազկակալի երկարությունը՝ $AB=DC$ հավասար է 20սմ (դաստակի երկարություն+2սմ՝ ազատ ընդգրկման համար գումարած 2սմ կոճկման համար)՝ $16+4=20$ սմ:

Բազկակալի լայնությունը հավասար է 6-8սմ: Եթե բազկակալի երկարությունը 8սմ է, ապա կոճկման համար պետք է մշակել երկու օղակ:

Բազկակալը ձևում ենք ծալով՝ ներսից տեղադրելով սոսնձային երիզ, ինչպես ցույց է տրված գծագրում:



Բազկակալով թևի կտրվածքը կարելի է մշակել շեղ շրջակտորով կամ տերևիկով «листочка»:


Կանգունակ օձիքի գծագիր

Ձևաթղթի կառուցում

Գծել ABCD ուղղանկյունը:


$AB=DC$ հավասար է վզափորվածքի կիսաշրջագծին կոճակների համար նախատեսված շրջակտորի հետ միասին:

C և B կետերից դեպի վերև տեղադրել 1սմ: B կետից աջ տեղադրել 0,5սմ: AB և CD կողմերի մեջտեղի կետերով տանել սահուն գծեր:



Կանգունակով օդային օձիքի գծագիր


Գծել ABCD ուղղանկյունը: $AB=DC$ հավասար է 1/2 կանգունակի երկարությանը, իսկ լայնությունը 8սմ:




Ձևում ենք օձիքի երկու դետալ՝ ծալով: Կարաբաժինները բոլոր կողմերից կազմում է 1սմ, ներսից տեղադրվում է սոսնձային երիզ:

1.5. Բազկակալի մշակման հաջորդականությունը


Ձևել բազկակալի երկու դետալ՝ ներքևի մասը ծալված վիճակում: Բազկակալի արտաքին կողմն ամրացնել սոսնձային երիզով, որը ձևում ենք առանց կարաբաժինների:




Թևաբերանի մասում անել 2 ծալ՝ 2սմ լայնությամբ: Թևաբերանը միացնել բազկակալի ամրացված հատվածին՝ երեսը երեսին, բլանդել, ինչպես ցույց է տրված նկարում՝ կարաբաժինները թողնելով ազատ: Մեքենակարել բազկակալը վերնաշապիկի թևաբերանին:




Բազկակալի կողային կարաբաժինները պետք է մնան ազատ վիճակում:



Կարաբաժիններն իջեցնել ներքև՝ բազկակալի վրա:



Բազկակալը ծալել մեջտեղից՝ երեսը երեսին, թեթևակի ձգելով սոսնձային երիզով չսոսնձված երեսը՝ մեքենակարել:




Բազկակալի կողային կարաբաժինները կտրել մինչև 0,5սմ:




Շրջել բազկակալը շիտակ երես, փակել բաց եզրը, ուղղել կարաբա-
ժինները, ինչպես ցույց է տրված նկարում:



Մեքենակարել շրջված բազկակալի եզրը:



Այնուհետև առաջին կարից 0,5սմ հեռավորության վրա տալ երկրորդ զարդակարը:



Նշված տեղում կարելի օղակ, իսկ մյուս մասում՝ կոճակ:



1.6. Կանգունակով օձիքի մշակման հաջորդականությունը




Մինչ կանգունակով օձիքի մշակումը պետք է կարել շերտակտորը:



Կարևոր է՝

Եթե ցանկանում եք կարել կանգունակ օձիք առանց օդային օձիքի, պետք է պարզապես բաց թողնել օդային օձիքի կարման քայլերը:


Սոսնձային երիզով ամրացնել օձիքի վրայի շերտը և կանգունակի ներքևի շերտը:




Սոսնձային երիզով ամրացված և չամրացված շերտերը դնել իրար վրա՝ շիտակ երեսը շիտակ երեսին, գնդասեղներով ամրացնել՝ սկսելով մեջտեղից: Որպեսզի օձիքը լավ նստի, օձիքին պետք է տալ այն ձևը, որը պետք է ընդունի պարանոցի վրա: Այդ դեպքում օձիքի տակի չամրացված շերտը փոքր ինչ կփոքրանա (նկարում երևում է ավելորդ կտորը): Բլանդել կարճ կողմերը և արտաքին երկար կողմը: Ներքին կողմը պետք է բաց մնա:




Մեքենակարել սոսնձային կտորի երիզով՝ առանց ամրակարի:




Կտրել կարաբաժինները՝ թողնելով 3-4մմ, անկյուններում չրթվածք տալ, ինչպես ցույց է տրված նկարում: Անկյունների կարաբաժինները պետք է լինեն հնարավորինս փոքր:




Շրջել օձիքը շիտակ կողմ, բլանդել:







Օձիքը զարդակարված վիճակում:




Բլանդել՝ բաց կողմը մի փոքր կորացնելով:




Օդային օձիքը բլանդել սոսնձային կտորով ամրացված կանգունակին՝ դնելով կանգունակի սոսնձային կտորով ամրացված կողմը օդային օձիքի ամրացված կողմին՝ երեսը երեսին:




Մեքենակարել կանգունակի կողմից սոսնձային կտորի երիզից՝ առանց ամրակարի:




Այսպիսի տեսք ունի կանգունակը մեքենակարված վիճակում՝ սկսելով և վերջացնելով օդային օձիքի ծայրերից:




Այնուհետև պետք է միացնել վերնաշապիկը՝ օձիքին նշված տեղերով: (Նշումները տալիս ենք հետևամասի վզափորվածքի կենտրոնում և կանգունակի կենտրոնում): Կանգունակը դրվում է շիտակ կողմով վերնաշապիկի թաքս կողմի վրա:




Օձիքը բլանդել վերնաշապիկի հետևամասի վզափորվածքին և առաջամասի վզափորվածքին և վերնաշապիկի շերտակտորին այնպես, որ կանգունակի կարաբաժինը ազատ լինի:




Նկարում պատկերված է՝ ինչպես բլանդել օձիքը:




Մեքենակարել նշագրումներով՝ հետևելով, որ հակառակ կողմում (վերնաշապիկի վզափորվածքում) ծալեր չառաջանան:




Վզափորվածքի կարաբաժինները չրթվածք տալ կարից 2-3մմ հեռավորությամբ:




Կանգունակի երկրորդ շերտը դնել առաջինի վրա, համադրել ծայրերը, բլանդել (օդային օձիքը պետք է գտնվի կանգունակի շերտերի արանքում): Վզափորվածքի կարաբաժինները պետք է գտնվեն կանգունակի ամրացված շերտի վրա:







Մեքենակարել կանգունակի երկու շերտերը կարաքաժիններով:
Վերնաշապիկի շերտակտորի կարաքաժինը չկարելու համար այն պետք է ձեռքով հետ տանել:



Կարաբաժինների ավելորդ կտորը կտրել՝ կարճ կողմերում թողնելով մի փոքր ավել կտոր, քան երկար կողմերում:




Վերնաշապիկի օձիքը շրջել շիտակ կողմ, բաց կողմի կարաբաժինը շրջել՝ հավասարեցնելով կանգունակի երկու շերտերը:



Օձիքի կարաբաժինները բլանդել այնպես որ մեքենակարը տեսանելի չլինի:



Օձիքը մեքենակարել ներքևի մասից, վերնաշապիկի թարս կողմից՝ միաժամանակ մեքենակարելով հակառակ կողմը:



Պետք է հետևել, որպեսզի կարը երկու կողմից էլ լինի գեղեցիկ և անցնի ճիշտ եզրից կամ եզրից 1-2մմ հեռավորության վրա:



Այնուհետև պետք է կարել օղակը և կոճակը:


1.7. Վերնաշապիկի մոդելավորում

1.7.1. Փողկապով ամառային բլուզ



Ունենալով վերնաշապիկի հիմքի գծագիրը՝ կարելի է մոդելավորել տարատեսակ բլուզներ և վերնաշապիկներ: Այս նորաձև, գեղեցիկ և կանացի բլուզը հիանալիորեն համադրվում է ինչպես տաբատների, այնպես էլ կիսաշրջագծեստների հետ: Բլուզը կարված է վիսկոզից, իսկ փողկապը և փոթերը (волан)՝ մետաքսից:

Ամառային բլուզի ձևաթղթեր



Նկ. 1. Ամառային բլուզի առաջամաս

Ամառային բլուզի առաջամասի մոդելավորում

Կրծքի սեղմոնը փակել՝ տանելով դեպի կողք: Կողային սեղմոնը կարճացնել 2սմ-ով:

Առաջամասի ձևաթղթի վրա ուսը կարճացնել 6սմ-ով և խորացնել թևափորվածքը 1սմ-ով, ինչպես ցույց է տրված նկ.1-ում: Կողային գիծն ուղղել, իսկ ներքևի գիծը կորացնել, ինչպես ցույց է տրված նկ 1-ում: Գոտկատեղի հատվածում սեղմոնի փոխարեն գծագրել 6 ծալ՝ 1սմ խորությամբ, իսկ ծալերի միջև հեռավորությունը 0,5սմ: Առաջամասի կենտրոնի գծով տալ հավելում ամբողջական ձևվածքի կոճկեղատեղի համար՝ 1,5սմ, և 3սմ կոճկեղատեղի մշակման համար:

Ամառային բլուզի հետևամասի մոդելավորում

Հետևամասի ներքևի գիծը գծագրել այնպես, ինչպես առաջամասինը (նկ. 2): Թևափորվածքը խորացնել 1սմ-ով, ուսը կարճացնել 6սմ-ով: Թևատակի նոր գիծը գծել, ինչպես ցույց է տրված նկարում:

Փողկապի և փոթերի գծագիր

Նկար 3-ում պատկերված է փողկապի և փոթի գծագիրը, որը կարվում է փողկապին: Փողկապը կարվում է ըստ սխեմայի (2 դետալ) և կարվում է սովորական գոտու նման:

Փոթերը կարել ինչպես ցույց է տրված նկար 3-ում: Փոթի շրջագծի շառավիղը՝ R -ը հավասար է՝ $R=(1/3 \times 22\text{սմ}-1)=22/3-1=6,5\text{սմ}$: Ձևել փոթերի չորս դետալ, դնել իրար վրա զույգ-զույգ, կարել ծայրերը, շուռ տալ, բաց մասը փակել: Փոթերը արդուկել և կարել փողկապի տակից ձեռքով՝ մի քանի կարակուտ տալով՝ միացնելով A կետը A կետին (փողկապ, փոթ):

Ինչպե՞ս կապել փողկապը

Փողկապը ծալել երկու հավասար մասի, փաթաթել պարանոցի շուրջ, մի կողմից օղակը, մյուս կողմից՝ փողկապի ծայրերը: Փողկապի ծայրերը փոթերի հետ միասին մտցնել օղակի մեջ, ծալերը ուղղել, փոթերը պետք է շրջապատեն փողկապի կողքերը:


1.7.2. Փոքրիկ թևիկներով վերնաշապիկ

Ասեղնագործ բատիստից այս հմայիչ բլուզը պարզապես ստեղծված է ամուսնի համար: Բացի գործվածքից, այս բլուզն ունի մի շարք հետաքրքիր դետալներ՝ օդային օղակներ, փոքրիկ թևիկներ և կանգունակ օձիք:


Այս բլուզը կրկին մոդելավորում ենք վերնաշապիկի կամ շրջագգեստի հիմքի գծագրի հիման վրա:



Փոքրիկ թևիկներով վերնաշապիկ ձևաթղթեր



Նկ. 1. Հերևամաս



Նկ. 2. Առաջամաս

Ինչպե՞ս մոդելավորել թևիկներով բլուզը

Կարճացնել վերնաշապիկի առաջամասը գոտկատեղից ներքև 20սմ-ով: Առաջամասի ձևաթղթի վրա կտրել սեղմոնը, սոսնձել, ինչպես ցույց է տրված նկ. 2-ում: Բաց մնացած գոտկային սեղմոնը կարճացնել 2սմ-ով, այն պետք է սկսի մի փոքր ներքև կրծքի կենտրոնից:

Լրացուցիչ ձևել նաև բլուզի լանջափեշատակը 3սմ լայնքով: Լանջափեշատակը կարելի է ամրացնել սոսնձային երիզով:


Այս մոդելի համար նախատեսված է նաև օդային օղակներ, այդ իսկ պատճառով, որպեսզի ներքնագգեստը բլուզի տակից չերևա, նախատեսված է նաև ներքին կտորաշերտ, որը ձևվում է ծալով և կարվում է բլուզին աջ լանջափեշատակի ծայրից:

Ներքին կտորաշերտի ձևումը և մոդելավորումը ցույց է տրված նկ. 2-ում:

Բլուզի հետևամասը ձևում ենք այնպես, ինչպես վերնաշապիկի հիմքը, առանց փոփոխության, բացառությամբ երկարության. հետևամասը նույնպես պետք է կարճացնել, ինչպես առաջամասը:

Լրացուցիչ պետք է կառուցել նաև կանգունակ օձիքը (նկ. 3):

Բլուզի կանգունակ օձիքի կառուցում




Նկ. 3. Օձիք

Գծագրել ABCD եռանկյունը:

$AB=DC$ հավասար է բլուզի վզափորվածքի կիսաշրջագծին: C և B կետից վերև տեղադրել 1սմ: B կետից աջ տեղադրել 0,5սմ: AB և CD հատվածների միջնակետերից սահուն գծել օձիքի գծերը: Ներքին օձիքը ամրացվում է սոսնձային երիզով, որը ձևվում է առանց կարաբաժինների:

Թևիկի գծագիր

Նշումների արանքում ընկած թևատակի հեռավորությունը



Նկ. 4. Թևիկ

Թևիկը կարվում է թևատակին՝ հսկող նշումների արանքում (նշումները նկար 2-ում ցույց է տրված՝ թևատակի ներքևի կետից 4սմ վերև):

Թևիկը կառուցելու համար անհրաժեշտ է չափել հսկող կետերի միջև ընկած հատվածը: Գծագրել թևիկը այնպես, ինչպես ցույց է տրված նկար 4-ում: Թևիկի լայնքը 4սմ է: Թևիկը պետք է ձևել առանց ծալի, 2 դետալով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ եք հասկանում էսքիզ ասելով. կատարել կնոջ վերնաշապիկի մի քանի էսքիզներ:

2. Կատարել մարմնաչափում և կառուցել վերնաշապիկի հիմքի գծագիրը:

3. Վերնաշապիկի հիմքի վրա կատարել ձևափոխություն՝ ըստ ընտրված մոդելի:

4. Ձևել վերնաշապիկը՝ հաշվի առնելով կարաբաժինները:

5. Կատարել չափափորձ և մշակել վերնաշապիկը:

6. Օձիքի և բազկակալի մշակման ժամանակ ինչու՞ են անկյուններին չրթվածք տալիս:

7. Ի՞նչ կարաբաժնով է միանում օձիքը վզափորվածքին, և ի՞նչ կարաբաժնով է միանում բազկակալը թևաբերանին:

8. Ի՞նչ անվտանգության կանոններ են պահպանում կարի մեքենայով կարելիս և ջերմախոնավային մշակման ժամանակ:

ԳԼՈՒԽ 2

ԿՆՈՋ ՇՐՋԱԶԳԵՍՏ

2.1. Շրջագգեստի առաջացման պատմությունը



Հին ժամանակներում «շրջագգեստ» ասելով հասկանում էին ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ զգեստապահարանի ցանկացած իր: Տարիների ընթացքում փոփոխության ենթարկվեցին շրջագգեստ հասկացությունը, ինչպես նաև շրջագգեստի համար կիրառվող նյութերն ու ձևերը:

Հին եգիպտոսում ամենաշատ տարածված շրջագգեստը քիտոնն էր: Հին հռոմեացիների համար հագուստի հիմնական դետալը տոգան էր, իսկ հույների համար՝ տունիկան:

Մինչև 16-րդ դար՝ շրջագգեստ կրում էին և կանայք, և տղամարդիկ:

Միջին դարերի ընթացքում կանանց շրջագգեստներն ավելի ճոխ տեսք ստացան՝ խաչակիրների կողմից բերված արևելյան կտորների և զարդերի շնորհիվ: Բացի այդ, շրջագգեստները ենթարկվեցին նաև ոճային փոփոխության. ի հայտ եկան ժանյակները: Այս ժամանակաշրջանի զգեստները քողարկում էին կնոջ մարմնի թերությունները:

Բարոկկոյի դարաշրջանում (16-րդ դարի վերջից 17-րդ դար) նորածնություն մտան ոճայնությունն ու թատերայնությունը: Բարոկկոն

ծաղկում ապրեց ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-րդի օրոք, և հենց այդ ժամանակաշրջանից էլ Ֆրանսիան սկսեց թելադրել նորաձևություն ողջ Եվրոպայի համար:

18-րդ դարի սկիզբը ռոկոկոյի դարաշրջանն էր. հանդիսավոր շքեղությանը փոխարինելու եկավ թեթևությունը, սեթևեթելիությունը: Ռոկոկոյի դարաշրջանի գեղեցկուհիներն ունեին նեղ ուսեր և բարակ իրան: Զգեստի բացվածքն ավելի խորացվեց, իսկ կիսաշրջազգեստը մի փոքր կարճացվեց: 18-րդ դարում ի հայտ եկան կնոջ զգեստների մի քանի ոճեր: Սկզբում նորաձև էին մանթոները՝ երկար զգեստ հետևամասում ընդգրկող, իսկ առաջամասում՝ բացվող ներքին կիսաշրջազգեստով: Այնուհետև ստեղծվեցին քոնթուշները (contouche)՝ էլեգանտ զգեստ ուսերից իջնող մեծ ծալերով: Առաջացան նաև պոլոնեզ զգեստները, որոնք բաղկացած էին կիսաշրջազգեստից և վերնամասից, որի վրայից էլ հագնում էին չկոճկվող ծալազարդ զգեստ: Զգեստի այս տեսակը Մարիա Անտուանետայի զգեստապահարանի ամենասիրելի իրն էր:



Քոնթուշ (contouche) Պոլոնեզ

18-19-րդ դարերում կրկին նորաձևություն մուտք գործեց բնականությունը: Զգեստը ձեռք է բերում հստակ չափեր և սահուն գծեր: Նորաձև են դառնում լայն բացվածքով, կարճ թևերով սպիտակ վերնաշափկները, առաջամասում կիպ գրկող, հետևամասում՝ լայնացող: Գոտին տեղադրվում էր անմիջապես կրծքի տակից:

1905-1906թթ. հայտնի մոդելավորողները, ինչպիսիք են՝ Poiret, Erte և Fortuny, թողարկեցին հասարակ շրջագգեստների նոր մոդելներ, որոնք կարելի էր կրել առանց կորսեստների: Սկզբում փեշի երկարությունը կարճացվեց հատակից մինչև կոճեր, որը դարձավ նորաձևության, ինչպես նաև ողջ բարոյականության սենսացիան:

1922թ. կանայք մտան դեռահաս տղայի կերպարի մեջ՝ կարճ սանրվածք, հասարակ ձևվածքի զգեստներ:

1926թ., երբ Կոկո Շանելն առաջին անգամ ցուցադրեց իր փոքրիկ սև զգեստը, այն մեծ էֆեկտ չառաջացրեց: Միայն 30-ական թվականներից սկսած՝ փոքրիկ սև զգեստը ապրեց իր փառքը. այն ինչ-որ տեղ հավասարեցրեց բոլոր կանանց:

40-ական թվականների սկզբներին նորաձև էին մի քանի շերտանի փեշերով զգեստները, լուսամփոփ թևերով:



Կոկո Շանել

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նորաձև էին ծունկը ծածկող փեշերը և խիստ ուղղանկյուն ձևվածքը: Պատերազմից

հետո նորաձևության մեջ տեղի ունեցավ հեղափոխություն. ֆրանսիացի մոդելավորող Քրիստիան Դիորը ստեղծեց հայտնի ոճը՝ «Նյու լուք»՝ նեղ, ընդգրկող վերնամաս, լայն փեշ և բարակ կրունկներով կոշիկներ: Դիորի սիրելի գույները՝ մոխրագույնը և վարդագույնը, կնոջը հաղորդեցին էլեգանտություն և ռոմանտիկություն:



Քրիստիան Դիոր

1960-ական թվականներին նորաձևություն մտան արիեստական գործվածքները՝ կրեպլին, նեյլոն, դակրոն, լայկրա, պոլիեսթեր: Արիեստական գործվածքները միանգամից գրավեցին հասարակության ուշադրությունը, քանի որ դրանցով կարված զգեստները չէին ճմռվում, հեշտ էին մաքրվում և լվացվում, չէին կորցնում իրենց արտաքին ձևն ու տեսքը և մատչելի էին:

Հիպպին և հիպպի ոճի երկրպագուները նորաձևություն մտցրեցին ձեռքի աշխատանք պարունակող զգեստներ, բնական գործվածքներ, ծաղկավոր և զուլավոր նախշեր և շատ արքեսուարներ: Նորաձևություն մտան ազգային ոճով ասեղնագործ, բնական գործվածքներից կարված երկար սարաֆանները:

«Դիսկո» ոճի շրջազգեստները 70-ականների առանձնահատկություններից էին: Վառ և փայլուն շրջազգեստ-տունիկաները նախընտրում էին կրել ջինսե շորտերի կամ ծաղկավոր լասինանների հետ:

1980-ականների շրջագգեստները առանձնանում էին լայն ուսադիրներով, ինչը ստեղծում էր «շրջված եռանկյուն» ուրվագիծը: Երկար ժամանակ նորաձև էին լայն ուսերով նեղ գգեստները, լայն գոտիով և լայն վզափորվածքով:

90-ական թվականների նորաձայունը հայտնի էր խառը ուղղվածությամբ. իտալական ոճ՝ դեկոր և վառ գույներ, ամերիկյան մինիմալիզմ, «նեոպանկ» և «գրանժ»: 90-ականների վերջին արևմուտքը վերադարձավ դասական ոճին: Այդ ժամանակ փոքրիկ սև շրջագգեստը կարող էր լինել մուգ կանաչ կամ կարմիր:

Նոր հազարամյակների նորաձայունն ակտիվորեն օգտագործում է 20-ական թվականներին ստեղծված ուրվագծերը:



2.2. Կնոջ շրջագետսի հիմքի և ձևաթղթերի կառուցում

Շրջագետս ձևելու համար առաջին հերթին պետք է կատարել մարմնաչափում և կառուցել հիմքը:

Զգեստի հիմքը նախագծելու համար (48չափ) անհրաժեշտ է ստանալ հետևյալ չափումները.

- ✓ Զգեստի երկարություն - 100սմ
- ✓ Մեջքի երկարություն մինչև իրան - 38սմ
- ✓ Ուսի երկարություն - 13սմ
- ✓ Պարանոցի կիսաշրջագիծ - 18սմ
- ✓ Կրծքավանդակի կիսաշրջագիծ - 44սմ
- ✓ Կրծքի կիսաշրջագիծ - 48սմ
- ✓ Գոտկատեղի կիսաշրջագիծ - 37սմ
- ✓ Կոնքի կիսաշրջագիծ - 50սմ
- ✓ Թևատակի խորություն - 20,5 սմ


Օժանդակ չափումներ

- ✓ Մեջքի լայնություն՝ $1/8$ կրծքի շրջագիծ $+5.5սմ=17.5սմ$
- ✓ Թևատակի լայնություն՝ $1/8$ կրծքի շրջագիծ $-1.5սմ=10.5սմ$
- ✓ Կրծքի լայնություն՝ $1/4$ կրծքի շրջագիծ $-4սմ=20սմ$


Գծագրենք ABCD ուղղանկյունը:

Թղթի վերևի անկյունից դեպի ներքև չափել 10-15սմ և ձախ անկյունում գրել A: A կետից դեպի ներքև տանել ուղղահայաց գիծ՝ 100սմ երկարությամբ (զգեստի երկարությունը) և նշանակել D տառով: A կետից աջ տանել հորիզոնական գիծ, երկարությունը՝ $1/2$ կրծքի շրջագիծը գումարած 1,5սմ և նշանակենք B տառով:

Թևատակի գիծ: A կետից դեպի ներքև նշել թևատակի խորության չափը $+ 0.5սմ$ և նշանակել Γ տառով: Γ կետից դեպի աջ տանել հորիզոնական գիծ մինչև BCուղղին հատվելը և նշանակել Γ1 տառով:




Դ կետից աջ տեղադրել մեջքի լայնություն՝ 17.5սմ, թևատակի լայնությունը + 0,5 սմ՝ 11սմ, կրծքի լայնությունը + 1՝ 21սմ: Ստացված կետերով տանել ուղահայաց օժանդակ գծեր մինչև AB գծի հետ հատվելը:




Գոտկատեղի գիծ. A կետից դեպի ներքև տեղադրել մեջքի երկարությունը մինչև գոտկատեղ՝ ըստ չափերի, և նշանակել T տառով: Տանել T T1 գիծը:

Կոնքի գիծ: T կետից ներքև չափել 20 սմ՝ կոնքի բարձրությունն ըստ չափումների, և նշանակել Ո տառով: Տանել ՈՈ1 գիծը:




Կողքի գիծ: Թևատակի խորությունը հավելումով հանդերձ բաժանել երկու հավասար մասի, բաժանման կետից դեպի ներքև տանել ուղղահայաց գիծ մինչև CD-ի հետ հատվելը: Աջ և ձախ թևատակի խորության օժանդակ ուղղահայաց գծերը բաժանել 4 հավասար մասերի:

Հետևամասի վզափորվածք: A կետից աջ չափել 6,5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծը՝ գումարած 0,5սմ) և վերև 2սմ (բոլոր չափերի համար): Կառուցել հետևամասի վզափորվածքի դուրս եկած մասը:




Հետևամասի ուսի կառուցում: Թևատակի ձախ օժանդակ գծի վրա վերևից ներքև չափել 1,5սմ: Ուղիղ գծով միացրեք 2 (հետևամասի վզափորվածք) և 1,5 (ուսի թեքություն) կետերն իրար: Ուսի երկարությունն ըստ չափերի 13սմ է:


Հետևամասի թևատակի գիծ: Ներքևի ձախ անկյունից (թևատակի լայնության) տանել 2սմ երկարությամբ անկյան կիսորդ (բոլոր չափերի համար) և կորաքանոնի միջոցով կամ ձեռքով գծել հետևամասի թևափորվածքը՝ հենվելով հսկող կետերի վրա՝ կետ 13, միջին օժանակ բաժանման կետ, կետ 2:



Առաջամասի բարձրություն: Դ1 կետից վերև տեղադրել 24,5սմ (1/2 կրծքի կիսաշրջագիծ+0.5սմ) և նշանակել Ս տառով: Ս կետից տանել հորիզոնական գիծ՝ հատելով թևատակի օժանդակ հորիզոնական գիծը:




Առաջամասի վզափորվածք: Ս կետից դեպի ծախ տեղադրել 6,5 սմ (1/3 վզի կիսաշրջագիծ+0.5սմ) և դեպի ներքև 7.5սմ (1/3 վզի կիսաշրջագիծ +1.5սմ): Կառուցել առաջամասի թևափորվածքը կորաքանոնով կամ ձեռքով, ինչպես հետևամասինը:




Առաջամասի ուսի գիծ մինչև սեղմոն: 6,5 կետից դեպի ձախ տեղադրել 4սմ և 1սմ դեպի ներքև (բոլոր չափերի համար): Տանել կարճ թեք գիծ:

1 կետից դեպի ներքև տանել օժանդակ ուղղահայաց կետագիծ մինչև թևատակի $\Gamma\Gamma_1$ գիծը: Դեպի աջ չափել 1սմ և միացնել 1-1 կետերը ուղիղ գծով (կրծքի սեղմոնի աջ կողմը պատրաստ է):




Օժանդակ կետագծով չափել 8սմ դեպի ծախ (13սմ՝ ուսի երկարություն ըստ չափումների՝ հանած 4սմ (մինչև կրծքի սեղմոնի երկարություն) հանած 1սմ), և 2սմ ուղիղ անկյան տակ դեպի ներքև (բոլոր չափերի համար): Կառուցել առաջամասի ուսի գիծը:

Առաջամասի ուսի ծայրակետից տանել օժանդակ կետագիծ դեպի թևատակի օժանդակ գծի ներքևի բաժանման կետ: Ստացված կետագիծը բաժանել երկու հավասար մասի: Աջ թևատակի ներքևի անկյունից տանել 2սմ երկարությամբ անկյան կիսորդ:



Երկու հավասար մասի բաժանած կետագծից ուղիղ անկյան տակ տանել 1սմ դեպի աջ: Կորաքանոնի միջոցով կամ ձեռքով գծել առաջամասի թևափորվածքը հսկող կետերով՝ ուսի կետ, օժանդակ գծի բաժանման կետ, կետ 2-ով դեպի կողք:

Կողային սեղմոններ: $11\text{սմ}/3=3.6\text{սմ}$ (կլորացնում ենք մինչև 4սմ):




Կարևոր է

Կողային գծերը խառնվում են ձախ և աջ (1/2 կոնքի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների +1սմ):

Հետևամասի գոտկատեղի սեղմոն 4սմ, առաջամասի՝ 3սմ: Ընդհանուր 11սմ:

Հետևամասի գոտկատեղի սեղմոն: Հետևամասի գոտկատեղի լայնությունը մինչև կողք բաժանել երկու հավասար մասի, և բաժանման կետից տանել ուղղահայաց գիծ մինչև թևատակ և կոնք ու գծել սեղմոնը, ինչպես ցույց է տրված նկարում:


Առաջամասի գոտկատեղի սեղմոն: Կրծքի սեղմոնի բարձր կետից գծագրել օժանդակ ուղղահայաց գիծ մինչև գոտկատեղի գիծ: Գծագրել սեղմոնը՝ ինչպես ցույց է տրված գծագրում:



Խորհուրդ

Եթե ունեք նեղ իրան և կոր մեջք, ապա գործվածքի ավելցուկը կարելի է վերացնել հետևյալ մեջքային կարի և լրացուցիչ սեղմոնի միջոցով (կապույտ գծեր):

Ձևաթուղթը պատրաստի վիճակում: Առանձին-առանձին կառուցել առաջամասի և հետևամասի լեկալները, դնել գործվածքի վրա և ձևել:



2.3. Շրջագգեստի մոդելավորում


2.3.1. Բարձր իրանով շրջագգեստ

Այս շրջագգեստը բաղկացած է հետաքրքիր դետալներից՝ կրծքի շրջանում եռանկյունաձև կտրվածք, բարձր իրան, կողքից փոթեր, առջևի հատվածում՝ դարսեր, փոթեր՝ թևերի վրա:



Ինչպե՞ս նախագծել


Այս շրջագգեստը նախագծվում է շրջագգեստի հիմքի վրա:



Նկ. 1. Առաջամաս


Շրջագգեստի առաջամասի ձևաթղթի վրա տանել մոդելավորման գծեր, ինչպես ցույց է տրված նկար 1-ում: Գոտկատեղի սեղմոնը տեղափոխել դեպի կողք: Շրջագգեստի վզափորվածքը բաժանել երկու հավասար մասի և տանել թևի գիծը (կետագծեր):

Կտրել երկու դետալները և սոսնձել սեղմոնի երկայնքով: Ուսի գիծը երկարացնել 7սմ-ով՝ ծալքերի համար:



Նկ. 2.

4սմ լայնությամբ գոտին ձևել առանձին: Կտրել զգեստի վերևի մասը և տեղաշարժել այնպես, ինչպես ցույց է տրված նկար 2-ում:



Նկ. 3.


Զգեստի հետևամասում և առաջամասում մոդելավորել գոտին և թևերը: Հետևամասի սեղմոնները թողնում ենք անփոփոխ: Հետևամասի մեջտեղի կարի արանքում տեղադրել գաղտնի շղթա:

Բարձր իրանով զգեստը պատրաստ է, կարելի է ձևել և կարել:


2.3.2. Գոտկատեղն ընդգրկող շրջագգեստ




Գոտկատեղն ընդգրկող զգեստի ձևաթղթեր



Նկ. 1. Առաջամասի և հետևամասի մոդելավորում



Նկ. 2. Վերնամասի և թևի մոդելավորում



Նկ. 3. Կիսաշրջագգեստի մոդելավորում

Այս զգեստը մոդելավորում ենք շրջագգեստի հիմքի վրա, իսկ թևերը մեկ կարանի թևի հիմքի վրա:

Առաջամասի վերնամասը և հետևամասը մոդելավորել այնպես, ինչպես ցույց է տրված նկար 1-ում: Առաջամասի վզափորվածքը խորացնել

մինչև 14-15սմ և լայնացնել ուսի մասից 3սմ: Առաջամասի գոտկատեղի սեղմոնը տեղաշարժել դեպի կողք: Կտրել առաջամասը և հետևամասը գոտկատեղի գծով: Առաջամասի կրծքի սեղմոնը փակել (նայել նկար 1՝ առաջամասի և հետևամասի մոդելավորում, և նկար 2՝ վերնամասի մոդելավորում):

Թևի մոդելավորում

Թևի բարձրության գագաթից չափել 8-10սմ և տանել հորիզոնական գիծ: Կտրել գիծը:

Կիսաշրջագգեստի մոդելավորում

Այս զգեստի կիսաշրջագգեստը մոդելավորելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ուսումնական ծրագրով նախատեսված «Կնոջ կիսաշրջագգեստ» մոդուլը: Կիսաշրջագգեստը մոդելավորում ենք զանգակ կիսաշրջագգեստի հիմքի վրա: Ծալքերի հաշվարկը կատարված է 72սմ գոտկատեղի համար: Կիսաշրջագգեստի երկարությունը գոտկատեղից 55-60սմ է:

Զգեստի համար անհրաժեշտ է 145սմ լայնքով և 2,5մ երկարությամբ գործվածք:

Հիմնական գործվածքից ձևել.


- ✓ Առաջամասի վերնամաս - 2 դետալ
- ✓ Հետևամաս - 2 դետալ
- ✓ Թև -2 դետալ
- ✓ Կիսաշրջագգեստի առաջամաս -2 դետալ ծալով
- ✓ Կիսաշրջագգեստի հետևամաս -2 դետալ

Կարաբաժին՝ 1,5սմ, թևաբերանի համար՝ 2,5սմ, փեշի համար՝ 3սմ:


Առաջամասի վերնամասի և հետևամասի սեղմոնները կարել: Կարել վերնամասի մեջտեղի կարը մինչև վզափորվածքի կտրվածք: Կարաբաժինները մշակել: Կարել վերնամասի և կիսաշրջագգեստի կողային կարերը, ուսերը: Թևատակի և բոլոր կարաբաժինները մշակել: Թևաբերանը ծալել և մեքենակարել: Թևը կարել թևատակի հսկող b և c կետերի միջոցով: Թևատակի բաց մասը ծալել և մեքենակարել: Կիսաշրջագգեստի վրա ծալքեր տալ, ինչպես ցույց է տրված նկ. 3-ում: Կիսաշրջագգեստ բլանդել վերնամասին և մեքենակարել: Հետևամասում տեղադրել գաղտնի շղթա: Առաջամասի և հետևամասի վզափորվածքի կարաբաժինները արդուկել թարս կողմից և մեքենակարել: Փեշաբերանը ծալել և մեքենակարել:

2.4. Գաղտնի շղթայի մշակման հաջորդականությունը


Սովորաբար գաղտնի շղթան կարվում է շրջագգեստի կամ կիսաշրջագգեստի հետևանապի մեջտեղի կարի արանքում:



Նախքան աշխատանքին անցնելը, կարերը մաքրակարել: Ջգեստի թարս կողմից կավիճով ընդգծել գաղտնի շղթայի տեղադրման համար նախատեսված կարաբաժինները, ընդ որում, կարաբաժինները պետք է լինեն 1,5սմ լայնությամբ:




Կավիճով ընդգծված կարաբաժինը շրջել և թեթևակի սեղմել, բայց չարդուկել:




Բացել գաղտնի շղթան, շիտակ կողմով տեղադրել կարաբաժնի վրա: Գաղտնի շղթայի ատամիկները պետք է համապատասխանեն մեջտեղի կարին:



Բլանդել գաղտնի շղթան՝ համապատասխանեցնելով շղթայի ժապավենի վերևի մասը վզափորվածքի ծայրի հետ:




Աջ և ձախ կողմերի բլանդելը պետք է սկսել վերևից:




Կարի մեքենայի թաթիկը փոխել և տեղադրել գաղտնի շղթայի համար նախատեսված թաթիկը: Յուզամատով հետ տանել շղթայի ատամիկները, որպեսզի կարը տեսանելի լինի (շղթայի ժապավենի և ատամիկների արանք): Կարել շղթայի ձախ կողմը:




Կարն ավարտվում է, երբ մեքենայի թաթիկը հասնում է շղթայի գլխիկին:




Նման ձևով հարկավոր է կարել նաև աջ կողմը: Երկու կարերն էլ պետք է սկսել վերևից:




Ամրացնել կարերը երկակի հանգույցով:




Գաղտնի շղթան փակել:




Մնում է փակել զգեստի հետևամասի բաց կարը:




Բլանդել զգեստի հետևի կարը, ինչպես ցույց է տրված նկարում:



Փոխել մեքենայի թաթիկը, մեքենակարել՝ պահելով շղթայի ծայրերը, ինչպես ցույց է տրված նկարում:



Կարաբաժիններն արդուկել:



Հարցեր և առաջադրանքներ

1. Հին աշխարհում որո՞նք էին շրջագգեստների նախատիպերը:
2. Էսքիզավորել նախընտրած մոդելը և կատարել մարմնաչափում:
3. Կառուցել շրջագգեստի հիմքի գծագիրը, կատարել մոդելավորում:
4. Զգեստի շեղ դետալները գործվածքի ո՞ր թելի ուղղությամբ են ձևում:
5. Քանի՞ սանտիմետր գործվածք է հարկավոր ընտրած մոդելի համար, եթե գործվածքի լայնքը 140սմ է:
6. Ձևել շրջագգեստը, կատարել չափափործ:
7. Մշակել շրջագգեստը:
8. Մշակել գաղտնի շղթան:

ԳԼՈՒԽ 3

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԵԹԵՎ ՀԱԳՈՒՍՏ

3.1. Մանկական երկտակ կիսաարև կիսաշրջագգեստ



Այս կիսաշրջագգեստը հեշտ է կարել շտապելային գործվածքից: Անհրաժեշտ է վերցնել երկու չափ՝ գոտկատեղի շրջագիծ և կիսաշրջագգեստի երկարություն:

Շեղ ժապավենով մշակել երկու կիսաշրջագգեստների փեշերը: Երկու կիսաշրջագգեստները դնել իրար վրա այնպես, որ գոտկատեղի կտրվածքում հավասար լինեն: Այնուհետև կարել միասին որպես մեկ կիսաշրջագգեստ:

Հետևամասի մեջտեղի կարի արանքում տեղադրել գաղտնի շղթան, կարերը մշակել, արդուկել: Ձևել գոտին, ծալել շիտակ կողմը ներս. Մեքենակարել երկու կարճ կողմերը և կոճկման համար հավելումը, գոտին շրջել, բաց թողնված եզրը շրջել դնել շրջագգեստի գոտկատեղին և մեքենակարել:

Գոտին բավականին լայն է ստացվել՝ 8սմ, քանի որ այս մոդելի համար նախատեսված են ծալքեր: Գոտու երկայնքով մի քանի կարեր տալ իրարից 5-6 սմ հեռավորության վրա, կարի երկարությունը՝ 4մմ: Կարը ձգել մինչև 4սմ: Գոտին զարդարել բանտով:

3.2. Նախադպրոցական տարիքի մանկական շրջագգեստ




Այս բոլոր գեղեցիկ զգեստները կարելի է կարել մի փոքր ժամանակ տրամադրելով մոդելավորմանը: Դրա համար սկզբից անհրաժեշտ է կառուցել նախադպրոցական տարիքի աղջիկների զգեստի հիմքի գծագիրը:

Անհրաժեշտ չափումներ

- ✓ Մեջքի երկարություն մինչև գոտկատեղ - 26սմ
- ✓ Ձգեստի ընդհանուր երկարություն - 50սմ
- ✓ Ուսի երկարություն - 9սմ
- ✓ Պարանոցի կիսաշրջագիծ - 13,5սմ
- ✓ Կրծքի կիսաշրջագիծ - 30սմ
- ✓ Թևի երկարություն - 36սմ

Մանկական շրջագծեստի հիմքի գծագրի կառուցումը.



Քայլ 1: Գծել ABCD ուղղանկյունը:

Զգեստի երկարություն. AD հավասար է BC հավասար է 56սմ:

Զգեստի լայնություն. AB և CD հավասար են 34 սանտիմետրի (կրծքի կիսաշրջագիծն ըստ չափումների՝ գումարած 4սմ բոլոր չափերի համար)՝ $30+4=34$ սմ:

Դիպողություն

Զգեստն ավելի ընդգրկուն դարձնելու համար 4սմ ավելացնելու փոխարեն կարող եք ավելացնել 2-3սմ:

Թևատակի խորություն: A կետից ներքև չափել 16սմ և նշանակել Γ տառով (1/3 կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 6սմ բոլոր չափերի համար)՝ $30:3+6=16$ սմ:

Γ կետից աջ տանել հորիզոնական գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը և նշանակել Γ1 տառով:

Կոնքի գիծ: A կետից ներքև չափել 26սմ և նշանակել T տառով (մեջքի երկարություն մինչև գոտկատեղ): T կետից աջ տանել հորիզոնական գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը, և նշանակել T1 տառով:

Քայլ 2

Կողային գիծ: ԴԴ1 բաժանել երկու հավասար մասի, նշանակել Դ4 տառով և Դ4 կետից տանել կողային գիծը՝ մինչև DC գիծ, և նշանակել H տառով: TT1 գծի հետ հատման կետը նշանակել T2 տառով:

Թևատակի լայնություն: Դ4 կետից աջ և ձախ չափել թևատակի լայնությունը և նշանակել Դ2 և Դ3 տառերով: Թևատակի լայնությունը հավասար է 9,5սմ ($1/4$ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 2սմ բոլոր չափերի համար)՝ $30:4+2=9,5$ սմ:

Դ2 և Դ3 կետերից վերև տանել ուղիղ գծեր՝ մինչև AB գծի հետ հատվելը, հատման կետերը նշանակել Ո և Ո1:

Քայլ 3

Առաջամասի բարձրություն: B և Ո1 կետերից չափել 2սմ և նշանակել Ո2 և Ո3 տառերով: Ո2 և Ո3-ը միացնել:

Ուսի և թևատակի օժանդակ գծեր: ՈԴ2 գիծը բաժանել երկու հավասար մասի, իսկ Ո1Դ3 գիծը՝ երեք հավասար մասի:

Քայլ 4. Հետևամասի կառուցում

Վզափորվածք: A կետից աջ չափել 5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ՝ գումարած 0,5սմ բոլոր չափերի համար)՝ $13,5:3+0,5=5$ սմ: 5 կետից վերև չափել 1,5սմ և կոր գծով միացնել A կետի հետ:

Ուսի թեքություն: Ո կետից ներքև չափել 1,5սմ:

Ուսի գիծ: 1,5 կետից (հետևամասի վզափորվածք) դեպի ուսի թեքության 1,5 կետը տանել ուսի գիծը՝ 9սմ երկարությամբ (ըստ չափումների՝ ուսի երկարություն):

Հետևամասի թևատակի գիծ: Դ2 կետից, անկյունը բաժանելով երկու հավասար մասի, չափել 2,5սմ: Թևատակի գիծը տանել 9 կետից ՈԴ2 գծի բաժանման կետով, 2,5 կետով դեպի Դ4 կետ:

Քայլ 5

Կողային կարի գիծ: T2 կետից աջ չափել 2 սմ: Կողային կարի գիծը տանել Դ4 կետից, 2 կետով դեպի DC գիծ՝ չհասնելով DC գծին 1սմ-ով:

Զգեստի ներքևի գիծ: DH հատվածը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետը կոր գծով միացնել 1 կետին:

Քայլ 6. Առաջամասի կառուցում

Վզափորվածք: Ո3 կետից ներքև չափել 5,5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ՝ գումարած 1սմ բոլոր չափերի համար)՝ $13,5:3+1=5,5$ սմ:

ՈՅ կետից ձախ չափել 5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ՝ գումարած 0,5սմ բոլոր չափերի համար)՝ $13,5:3+0,5=5$ սմ:

5 և 5,5 կետերը կոր գծով միացնել իրար:

Ուսի թեքություն: ՈՂ կետից ներքև չափել 3սմ:

Ուսի գիծ: Առաջամասի վզափորվածքի 5 կետից դեպի ուսի թեքության 3 կետերը տանել ուսի գիծը՝ 9սմ երկարությամբ:

Քայլ 7

Թևատակի գիծ: Դ3 կետից, անկյունը բաժանելով երկու հավասար մասի, չափել 2սմ: Թևատակի գիծը տանել 9 կետից ՈՂԴ3 գծի ներքևի բաժանման կետով, 2 կետով դեպի Դ4 կետ:

Կողային կարի գիծ: Կ2 կետից ձախ չափել 2սմ: Կողային կարի գիծը տանել Դ4 կետից, 2 կետով դեպի ԿԿ գիծ՝ չհասնելով ԿԿ գծին 1սմ-ով:

Քայլ 8

Գոտկատեղի գիծ: Կ1 կետից ներքև չափել 2սմ և միացնել կողային կարի գծի 2 կետին:

Զգեստի ներքևի գիծ: Կ կետից ԿԿ գիծը երկարացնել 2սմ-ով, կետ 2-ը միացնել կողային կարի գծի ներքևի 1 կետի հետ:

Մանկական շրջագգեստի թևի հիմքի գծագրի կառուցում

Մանկական շրջագգեստի թևի գծագիրը կառուցելու համար օգտվում ենք մանկական շրջագգեստի չափումներից:


Քայլ 1: Գծել ABCD ուղղանկյունը:

Թևի երկարություն: AD հավասար է BC, հավասար է 36սմ (թևի երկարության չափը՝ ըստ չափումների):

Թևի լայնություն: $AB=DC=30$ սմ ($1/3$ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 5սմ, բազմապատկած 2-ով բոլոր չափերի համար)՝ $(30:3+5)\times 2=30$.

Քայլ 2

Թևի կորության թեքության գիծ: A կետից ներքև չափել 11սմ և նշանակել Ո տառով ($3/4$ թևատակի խորություն՝ հանած 1սմ բոլոր չափերի համար, $16:4\times 3-1=11$ սմ: Ո կետից աջ տանել հորիզոնական գիծ դեպի ԿԿ գծի հետ հատվելը և հատման կետը նշանակել ՈՂ տառով:



Քայլ 3


Թևի կորության գիծ: AB գիծը բաժանել 4 հավասար մասերի, մեջտեղի բաժանման կետը նշանակել O տառով, իսկ O կետից ձախ և աջ նշանակել O1 և O2: O, O1 և O2 կետերից դեպի ներքև տանել ուղղահայաց գծեր՝ մինչև DC գծի հետ հատվելը: Հատման կետերը նշանակել H, H1, H2 տառերով: ՊՕ և ՕՊ1 կետերը կետագծերով միացնել իրար, իսկ օժանդակ գծերի հետ հատման կետերը նշանակել O3 և O4 տառերով: ՊՕ3, ՕՅՕ, ՕՕ4 և Օ4Պ1 հատվածները բաժանել երկու հավասար մասերի: ՊՕ3 հատվածի բաժանման կետից դեպի ներքև՝ ուղիղ անկյան

տակ իջեցնել 1սմ, O3O և O04 հատվածների բաժանման կետերից տանել վերև 1,5սմ, իսկ O4O1 –ից դեպի ներքև՝ 1,5սմ: Թևի կորույթյան գիծը տանել Ո, 1, O3, 1,5, O, 1,5, O4, 1,5 կետերով դեպի Ո1 կետ:

Թևաբերանի գիծ: D, H1, C կետերից վերև չափել 1սմ, իսկ H2-ից՝ 2սմ: Թևաբերանի գիծը տանել 1, H, 1, 2, 1 կետերով:

Մանկական շրջագգեստի օդային օձիքի հիմքի գծագրի կառուցում

Մանկական շրջագգեստի օձիքի անկյունները կարելի է գծագրել և՛ կոր, և՛ ուղիղ: Եթե ցանկանում եք, որ օձիքի անկյունները լինեն կոր, ուղղակի հարկավոր է անկյունները կորացնել: Օձիքի գծագիրը կառուցվում է շրջագգեստի չափումների հիման վրա:



Գծել ABCD ուղղանկյունը:


Օձիքի երկարություն: $AB=DC=17,5$ սմ (պարանոցի կիսաշրջագիծ՝ գումարած 4սմ բոլոր չափերի համար)՝ $13,5+4=17,5$ սմ:

Օձիքի լայնություն: Ուղղանկյան AD և BC կողմերը հավասար են 7սմ:

Օձիքի ներքևի և կարման գիծ: A կետից աջ չափել 4,5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ): $13,5:3=4,5$ սմ: B կետից ձախ չափել 4սմ, այնուհետև ներքև՝ 2սմ: 2 և 4,5 կետերը միացնել իրար: Օձիքի ներքևի գիծն անցնում է D կետով դեպի C կետ:


Օձիքի անկյուն: 2 կետը միացնել C կետին:

3.3. Դպրոցական տարիքի տղայի տաբատ



Անհրաժեշտ չափումներ

- ✓ Տաբատի երկարություն, որը չափում ենք կողքից – 80սմ
- ✓ Գոտկատեղի կիսաշրջագիծ – 34սմ
- ✓ Կոնքի կիսաշրջագիծ – 38սմ



Առաջամասի կառուցում

Գծագրել ABCD ուղղանկյունը:

Տաբատի լայնությունը: Ուղղանկյան AB և DC կողմերը հավասար են 25սմ (1/2 կոնքի կիսաշրջագիծ՝ գումարած 6սմ բոլոր չափերի համար)՝ $38:2 + 6 = 25$:

Կարևոր է

Եթե ցանկանում եք կարել ավելի ընդգրկուն տարապ, ազատ ընդգրկման հավելումը պետք է վերցնել ավելի փոքր:

Տաբատի երկարություն: AD և BC կողմերը հավասար են 80սմ:

Տաբատի քայքի գիծ: A կետից ներքև չափել 21սմ և նշանակել Մ տառով (1/2 կոնքի կիսաշրջագիծ գումարած 2սմ բոլոր չափերի համար)՝ $38 : 2 + 2 = 21$ սմ: Մ կետից աջ տանել ուղիղ գիծ մինչև BC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակել Մ1 տառով:

Տաբատի բանտովկայի գիծ: Մ1 կետից ձախ չափել 4սմ: Կետ 4-ից վերև տանել ուղիղ գիծ մինչև AB գծի հետ հատվելը և հատման կետը նշանակել T տառով: Այնուհետև կետ 4-ից վերև չափել 4 սանտիմետր: Բանտովկայի գիծն անցնում է T, 4, Մ1 կետերով:

Տաբատի գոտկատեղի գիծ: T կետից ձախ չափել 20սմ և նշանակել T1 տառով (1/2 գոտկատեղի կիսաշրջագիծ՝ գումարած 3սմ բոլոր չափերի համար)՝ $34 : 2 + 3 = 20$ սմ:

Տաբատի ծունկի գիծ: Մ1C գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից վերև չափել 6սմ: 6 կետից ձախ տանել ուղիղ գիծ՝ մինչև AD գծի հետ հատվելը:

Տաբատի սլաքի գիծ: ՄՄ1 գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից ներքև տանել ուղիղ գիծ՝ մինչև DC գծի հետ հատվելը, և վերև՝ մինչև AB գծի հետ հատվելը: Կոնքի գծի հետ հատման կետը նշանակել T2 տառով:

Տաբատի ներքևի գիծ: D կետից աջ չափել 3սմ և նշանակել H տառով: C կետից ձախ չափել 3սմ և նշանակել H1 տառով: H և H1 կետերը միացնել իրար:

Տաբատի քայքի կար: Մ1 և H1 կետերը միացնել իրար:

Տաբատի կողային կար: T2, Մ, H կետերը միացնել իրար:

Գոտկատեղի սեղմոններ և ծալքեր: T2 կետից աջ չափել 2,5սմ: T1T2 գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից աջ չափել 2,5սմ:

Տաբատի մանժետ: Եթե ցանկանում եք, որ տաբատը լինի մանժետով, ապա H և H1 կետերից գիծը երկարացնել 6-8սմ և միացնել իրար կետագծերով:

Հետևամասի կառուցում

Գծագրել ABCD ուղղանկյունը:

Տաբատի լայնություն: Ուղղանկյան AB և DC կողմերը հավասար են 25սմ (1/2 կոնքի կիսաշրջագիծ՝ գումարած 6սմ բոլոր չափերի համար)՝ $38:2 + 6 = 25$ սմ:

Տաբատի երկարություն: AD և BC կողմերը հավասար են 80սմ:

Տաբատի քայքի երկարություն և լայնություն: A կետից ներքև չափել 21սմ և նշանակել M տառով ($1/2$ կոնքի կիսաշրջագիծ՝ գումարած 2սմ բոլոր չափերի համար)՝ $38 : 2 + 2 = 21$ սմ: M կետից աջ տանել ուղիղ գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակել M1 տառով: M կետից ձախ տանել 7,3սմ երկարությամբ գիծ ($1/4$ M M1 հեռավորություն՝ գումարած 1սմ բոլոր չափերի համար)՝ $25 : 4 + 1 = 7,3$ սմ:

Տաբատի ծունկի գիծ: M1C գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից վերև չափել 6սմ: 6 կետից ձախ տանել ուղիղ գիծ՝ մինչև AD գծի հետ հատվելը, և AD գծից դուրս գա 3սմ:

Տաբատի գոտկատեղի գիծ: B կետից աջ AB գիծը կամայականորեն երկարացնել: Այնուհետև AB գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից վերև չափել 3սմ: Կետ 3-ից աջ մինչև երկարացրած AB գծի հետ հատվելը տանել գոտկատեղի գիծ 17 սմ երկարությամբ և նշանակել T տառով ($1/2$ գոտկատեղի կիսաշրջագիծ)՝ $34 : 2 = 17$ սմ: Գոտկատեղի գիծը կետ 3-ից երկարացնել 5սմ-ով:

Տաբատի նստատեղի գիծ: 7,3-ից դեպի M գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից ներքև չափել 1սմ: Այնուհետև, M կետից աջ և վերև չափել 4սմ: Նստատեղի գիծը անցնում է 7,3, 1, M, 4, 5 կետերով:

Տաբատի ներքևի գիծ: C կետից ձախ չափել 4սմ և նշանակել H տառով: D կետից ձախ չափել 1սմ և նշանակել H1 տառով: H և H1 կետերը միացնել իրար:


Տաբատի կողային կար: T և H կետերը միացնել իրար:

Տաբատի քայքի կար: Կետ 7,3 և 3(ծունկ) միացնել կետագծերով, բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից աջ չափել 0,5սմ: Գիծն անցնում է 7,3, 0,5, 3, H1 կետերով:

Գոտկատեղի սեղմոն: 3 T գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից աջ ու ձախ չափել 2սմ, իսկ ներքև՝ 7սմ: 1,7 և 2 կետերը միացնել իրար:

Տաբատի մանժետ: H1 և H կետերից դեպի ներքև գիծը երկարացնել 6-8 սմ: 6 և 8 կետերը կետագծերով միացնել իրար:

Կողային գրպաններով տաբատի մոդելավորում





Ձևաթղթի վրա առանձին-առանձին ձևել առաջամասը և հետևամասը: Առաջամասի վրա կողային գծով չափել 14սմ՝ գրպանի մուտք: Գոտկատեղի գծով չափել 3սմ: Գծել գրպանի մուտքը:

Կողքից՝ 14սմ-ից ներքև, չափել 4սմ, ինչպես ցույց է տրված գծագրում: Կորաքանոնով գծագրել տոպրակացուն: Առանձին ձևաթղթի վրա ձևել տոպրակացուն՝ կողիկի (Бочок) հետ միասին, և տոպրակացուն: Տոպրակացուն կողիկի հետ միասին ձևել հիմնական գործվածքից, իսկ տոպրակացուն աստառացուի գործվածքից: Կողիկը կտրել:

Տաբատի կենտրոնի գծից (բանտովկայի գիծ) անհրաժեշտ է ավելացնել 3սմ շղթայի քիվի համար: Քիվի երկարությունը հավասար է շղթայի երկարությանը, մոտավոր՝ 20սմ:

Հետևամասը ձևել ըստ հիմքի գծագրի, առանց փոփոխության:

Հիմնական գործվածքից ձևել.

- ✓ Առաջամաս քիվի հետ միասին -2 դետալ
- ✓ Հետևամաս - 2դետալ
- ✓ Գրպանի տոպրակացու կողիկի հետ միասին -2 դետալ
- ✓ Գոտի – 7սմ լայնությամբ (պատրաստի 3,5սմ), երկարությունը գոտկատեղի շրջագիծ՝ գումարած 3սմ կոճկման համար

Աստառացու գործվածքից ձևել.

- ✓ Գրպանի տոպրակացու -2դետալ


Բոլոր դետալները ձևել 1,5սմ կարաբաժնով, փեշաբերանի համար 3սմ կարաբաժնով:

Տաբատի գոտին ամրացնել սոսնձային երիզով:

Տաբատի առաջամասի երկու դետալների վրա սլաքներ տալ, կարել գրպանները: Բլանդել և կարել տաբատի կողային և քայլքային կարերը: Առաջամասում ծալեր տալ և մեքենակարել, հետևամասում բլանդել և մեքենակարել սեղմոնները:


Բլանդել և մեքենակարել տաբատի աջ և ձախ ոտքերը մեջտեղի գծով՝ մինչև քիվի նշված մասը: Կարել շղթան քիվի հետ միասին: Կարել գոտին, փողկերը ծալել և ձեռքով կարել: Արդուկել սլաքի գծերը, կարել գոտու ճարմանդը:

Քիվով շղթայի մշակում:




Քիվով շղթաները մշակում են և՛ կիսաշրջագգեստների, և՛ տաբատների համար: Քիվով շղթա կարելու համար անհրաժեշտ է տաբատի կամ կիսաշրջագգեստի կենտրոնի գծից ավելացնել 3սմ, իսկ երկարությունը հավասար է շղթայի երկարությանը: Այս գործողությունը կատարելու ժամանակ պետք է հաշվի առնել, թե որ կողմում ենք կարելու ճարմանդը:

Տղամարդկանց հագուստի դեպքում կոճկման տեղամասի հավելումից ծախ ավել կտորը կտրել, իսկ կնոջ հագուստի դեպքում աջ ավել կտորը կտրել՝ թողնելով 1սմ կարաբաժին և 1 սմ ելուստի համար:



Ձևել քիվը, ծալել մեջտեղից երեսի կողմը ներս, մշակել ծայրերը այնպես, ինչպես ցույց է տրված նկարում:

Բլանդել շղթան կոճկման տեղամասի ծախ կտրվածքի տակ, վրայից դնել քիվը: Բլանդել բոլոր շերտերը: Շղթայի վրայից մեքենակար տալ ծայրից 2մմ հեռավորությամբ: Շրջել, արդուկել աջ ամբողջական ձևվածքի քիվը՝ մշակելով օվերլոկով, կարել շղթայի ժապավենին:




Թարս կողմից շրջել քիվի հավելումը և շղթայի ժապավենը, որպեսզի մեքենակարելը հարմար լինի:

Շրջել հագուստը շիտակ երես, նշված մասում տալ զարդակար: Քիվի ներքևի մասում տալ կարճ զիգզագանման ամրակար:

3.4. Դպրոցական տարիքի տղայի վերնաշապիկ





Վերնաշապիկը 36 չափի է:

Անհրաժեշտ չափումներ

- ✓ Վերնաշապիկի երկարություն 65սմ
- ✓ Ուսի երկարություն – 11սմ
- ✓ Պարանոցի կիսաշրջագիծ -16,5սմ
- ✓ Կրծքի կիսաշրջագիծ -36սմ
- ✓ Թևի երկարություն – 50սմ

Ցանցի կառուցում

Գծել ABCD ուղղանկյունը:

Վերնաշապիկի երկարություն: AD և BC կողմերը հավասար են վերնաշապիկի երկարությանը՝ ըստ չափումների՝ 65սմ:

Վերնաշապիկի լայնություն: $AD=BC=40$ սմ՝ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 4սմ բոլոր չափերի համար՝ $36+4=40$ սմ:

Թևատակի խորություն: A կետից ներքև չափել 18սմ և նշանակել Γ տառով ($1/3$ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 6սմ բոլոր չափերի համար)՝ $36/3+6=18$ սմ: Γ կետից աջ տանել ուղիղ գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը և նշանակել $\Gamma 1$ տառով:

Վերնաշապիկի կողային գիծ: Γ կետից աջ չափել $1/2$ $\Gamma\Gamma 1$ և նշանակել $\Gamma 4$ տառով: $\Gamma 4$ կետից ներքև տանել ուղղահայաց գիծ մինչև DC գծի հետ հատվելը և նշանակել H տառով:

Թևատակի լայնություն: Թևատակի լայնությունը հավասար է $1/4$ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 2սմ բոլոր չափերի համար՝ $36/4+2=11$ սմ: $\Gamma 4$ ծախ և աջ չափել 5,5 սմ ($1/2$ թևատակի լայնություն) և նշանակել $\Gamma 2$ և $\Gamma 3$ տառերով: $\Gamma 2$ և $\Gamma 3$ կետերից վերև տանել ուղղահայաց գծեր մինչև AB գծի հետ հատվելը և նշանակել Π և $\Pi 1$: $\Pi\Gamma 2$ և $\Pi 1\Gamma 3$ օժանդակ գծերը բաժանել երեք հավասար մասի:

Հետևամասի կառուցում

Վզափորվածք: A կետից աջ չափել 5,5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ)՝ $16,5/3=5,5$ սմ: Կետ 5,5-ից վերև չափել 1,5սմ և միացնել A կետին կոր գծով:

Ուսի թեքվածություն: Π կետից ներքև չափել 2սմ:

Ուսի գիծ: Վզափորվածքի 1,5 կետից ուսի թեքվածության 2 կետով տանել ուսի գիծը 12,5սմ երկարությամբ (ուսի երկարություն գումարած 1,5սմ բոլոր չափերի համար)՝ $11+1,5=12,5$ սմ:

Թևատակի գիծ: $\Gamma 2$ կետից, անկյունը բաժանելով երկու հավասար մասի, չափել 2սմ: Թևատակի գիծը տանել 12,5 կետից $\Pi\Gamma 2$ գծի վերևի և ներքևի բաժանման կետով, 2 կետով դեպի $\Gamma 4$ կետ:

Վերնաշապիկի փեշաբերան: H կետից վերև չափել 2սմ: Գծել հետևամասի ձևավոր գիծը ինչպես ցույց է տրված նկարում:

Հետևամասի կցակտոր (кокетка): A կետից ներքև չափել 5սմ: Կետ 5-ից աջ տանել հորիզոնական գիծ՝ մինչև հետևամասի թևատակի գծի հետ հատվելը: Հատման կետից ներքև, թևատակի գծով չափել 1սմ և միացնել սահուն գծով կցակտորի գծին:

Առաջամասի կառուցում

Վզափորվածք: B կետից ձախ և ներքև չափել 5,5սմ ($1/3$ պարանոցի կիսաշրջագիծ)՝ 16,5/3=5,5սմ: Ստացված կետերը միացնել կոր գծով:

Ուսի թեքվածություն: Ուսի կետից ներքև չափել 2սմ: Ուսի գիծը տանել վզափորվածքի 5,5 կետով, 2 կետով 12,5սմ երկարությամբ (ուսի երկարություն ըստ չափումների գումարած 1,5սմ)՝ 11+1,5=12,5սմ:


Թևատակի գիծ: Դ3 կետից անկյունը բաժանելով երկու հավասար մասի չափել 2սմ: Թևատակի գիծը տանել կետ 12,5-ով, ՈւՄԴ3 գծի բաժանման ներքևի կետով, 2 կետով դեպի Դ4 կետ:

Կողային կարի գիծ: Դ4 կետից ներքև տանել ուղղահայաց գիծ և նշանակել H կետով:

Փեշաբերանի գիծ: H կետից վերև չափել 3սմ: Գծել ուռուցիկ գիծ:

Ամբողջական ձևվածքի շերտակտոր: Առաջամասին ավելացնել 4,5սմ, ինչպես ցույց է տրված գծագրում:

Թևի կառուցում



Թևի երկարություն: $AD=BC=50\text{սմ}$ թևի երկարություն՝ ըստ չափումների:

Թևի լայնություն: $AB=DC$ հավասար է 36սմ (կրծքի կիսաշրջագիծ):

Թևի ուռուցիկության գիծ: A կետից ներքև չափել 8սմ և նշանակել Π տառով ($1/6$ կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 2սմ)՝ $36/6+2=8\text{սմ}$:


Π կետից աջ տանել ուղիղ գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը, և նշանակել $\Pi 1$ տառով:

Թևի օժանդակ գծեր: O կետը միացնել կետագծերով Π և $\Pi 1$ կետերին: ΠO գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից վերև ուղիղ անկյան տակ դեպի կետագիծ չափել $1,5\text{սմ}$: $O\Pi 1$ կետագիծը բաժանել 4 հավասար մասի և վերևի բաժանման կետից վերև չափել 1սմ , իսկ ներքևի բաժանման կետից ներքև՝ $0,5\text{սմ}$: Թևի ուռուցիկության գիծը տանել Π , $1,5$, O , 1 կետերով $O\Pi 1$ գծի մեջտեղի բաժանման կետով, $0,5$ կետով դեպի $\Pi 1$ կետ:

Թևի կողային և ներքևի գիծ: D կետից աջ չափել 3սմ և միացնել Π կետին: Այնուհետև C կետից ձախ չափել 3սմ և միացնել Π կետին: Այնուհետև C կետից ձախ չափել 3սմ և միացնել $\Pi 1$ կետին:

Կոճկման համար նախատեսված կտրվածք: H կետից դեպի ձախ՝ 3 կետն ընկած հեռավորությունը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից վերև տանել ուղիղ գիծ՝ 8սմ երկարությամբ:

Կանգունակով օձիքի կառուցում



Կանգունակով օձիք կառուցելու համար պետք է չափել վզափորվածքի երկարությունը շերտակտորի հետ միասին: Ստացված մեծության $1/2$ կլինի DC գծի երկարությունը: Ուղղանկյան բարձրությունը հավասար է 11սմ : Օձիքը կառուցել այնպես, ինչպես ցույց է տրված գծագրում: Կանգունակը կտրել և ձևել առանձին:

3.5. Տղայի բաճկոնակ



Այս դասական բաճկոնակը գեղեցիկ համադրվում է տաբատի և սպիտակ վերնաշապիկի հետ: Այն ձևում ենք վերնաշապիկի հիմքի վրա փոփոխություն կատարելու միջոցով:

Աշխատանքի նկարագրություն

Առաջամասի և հետևամասի վզափորվածքից ուսի երկայնքով չափել 2սմ: Ուսի երկարությունը հավասար է 6սմ: Թևափորվածքը Դ4 կետից խորացնել 1,5սմ դեպի ներքև: Առաջամասի վզափորվածքից կենտրոնի գծով ներքև տեղադրել բաճկոնակի առաջամասի վզափորվածքի մեծությունը:

Կորաքանոնի միջոցով գծագրել առաջամասի և հետևամասի թևափորվածքի կտրվածքները և հետևամասի վզափորվածքի կտրվածքը:

Նոր թևափորվածքի գծից ներքև տեղադրել բաճկոնակի երկարությունը, տանել հորիզոնական գիծ: Տալ կոճկման մուտքի համար հավելում 1,5սմ, տանել հորիզոնական գիծ:

Կորաքանոնի միջոցով կառուցել բաճկոնակի առաջամասի կտրվածքը:

Գոտկատեղի գծով հետևամասի և առաջամասի լայնությունը բաժանելով երկու հավասար մասի՝ գծագրել սեղմոնները թևափորվածքի մակարդակից 3սմ ներքև 1,5սմ խորությամբ:

Առաջամասի թևափորվածքը բաժանել երկու հավասար մասի և կորաքանոնով սեղմոնի ծայրից երկարացնել գիծը դեպի թևափորվածք՝ ինչպես ցույց է տրված գծագրում:

Կողքի գիծ կառուցում ենք գոտկատեղի գծով կողքի գծից աջ և ձախ՝ չափելով 1,5սմ, կորաքանոնի միջոցով տանելով կողային նոր գծերը:

Բաճկոնակի ներքևի գիծը կառուցել անկյունաձև՝ սեղմոնից դեպի աջ չափելով մոտ 2սմ, այնուհետև ներքև՝ 4-5սմ:

Լրացուցիչ կառուցել լանջափեշը և հետևամասի դարձվածքը (обтачка) այնպես, ինչպես ցույց է տրված գծագրում:

Ուշադրություն դարձրեք: Բաճկոնակի հետևամասից տեղադրվում է ձգաժապավեն(ռեզին), որպեսզի բաճկոնակն ավելի լավ ընդգրկի մարմինը:

Կարևոր է


Մոդելավորումն ավարտելուց հետո ձևաթղթի վրա անհրաժեշտ է հետևել գոյրկալրեղի շրջագծին. այն պետք է հավասար լինի գոյրկալրեղի շրջագծին(ըստ չափումների)՝ գումարած 2սմ ազատ ընդգրկման համար: Եթե չափը փոքր է սրացվել, անհրաժեշտ է փոքրացնել սեղմոնների խորությունը:

Լրացուցիչ պետք է ձևել գրպանի համար անհրաժեշտ տերևիկը:


3.6. Վրադիր տերևիկով գրպանի մշակման հաջորդականությունը




Գծագրում ցույց է տրված, թե ինչպես պետք է գծագրել տերևիկը: Սոսնձային կտորով ամրացնել տերևիկի արտաքին կողմը:




Արտաքին շերտն ամրացնել սոսնձային կտորով, ծալել շիտակ կողմը ներս, բլանդել և մեքենակարել երկու կարճ կողմերը:



Կտրել կարաբաժինները մեքենակարին մոտ, անկյուններում չրթվածք տալ:



Շրջել տերևիկը շիտակ կողմ, բլանդել:




Մեքենակարել եզրից 1,5սմ հեռավորությամբ:




Հիմնական զգեստի վրա մատիտով կամ կավիճով նշել գրպանի տեղը (15-17սմ լայնությամբ և 1սմ բարձրությամբ ուղղանկյուն): Գրպանի վերին մուտքն ավելի կարճ է, քան ներքին մուտքը(1,5սմ-ով՝ ամեն կողմից 0,75սմ):

Կարևոր է

Թարս կողմից գրպանի հալվածը կարելի է ամրացնել եռանկյունաձև սոսնձային կտորով, որը կլինի գրպանի մուտքի երկարությունից 3սմ ավել, իսկ լայնությունից՝ 2սմ: Սա անհրաժեշտ է այն դեպքում, եթե առաջամասն ամբողջությամբ սոսնձային կտորով ամրացված չէ, իսկ գործվածքը թափվող է:




Թել ու ասեղով փոխանցման կարի միջոցով նշված գծերը փոխանցել շիտակ երես: Շիտակ երեսից ներքևի գծով բլանդել տերևիկը: Ընդ որում, տերևիկի երկար կողմի կարաբաժինը վերևում պետք է գտնվի, իսկ տերևիկը՝ ներքևում: Հիմնական կտորից տոպրակացուն շիտակ կողմից տեղադրել զգեստի շիտակ կողմի վրա, ընդ որում, տոպրակացուի կարաբաժինը գտնվում է ներքևում, իսկ տոպրակացուն՝ վերևում:



Բլանդել հորիզոնական գծերով սկզբից գրպանի տերևիկը, այնուհետև՝ տոպրակացուն:




Տերևիկի վերևից, շիտակ երեսից տեղադրել աստառացու գործվածքից ձևված տոպրակացուն, ընդ որում, տոպրակացուի կարաբաժինը գրպանի մուտքի կողմից վերև է ուղղված, իսկ տոպրակացուն՝ ներքև:




Բլանդել աստառացու գործվածքից տոպրակացուն:



Զգեստի թարս կողմից մեքենակարել տերևիկը մի ծայրից մյուս ծայր, միաժամանակ կարելով գրպանի տուպրակացուները:




Գրպանը կտրել մեջտեղից՝ չվնասելով տերևիկը և տուպրակացուները՝ չհասնելով ծայրերին 1սմ:




Ուղղել երկու տոպրակացուները թարս կողմից՝ շրջելով տերևիկը վերև:




Գրպանի մուտքը կտրելուց հետո առաջացած եռանկյունները կոկիկ շրջել թարս կողմ՝ տալով շրջանակի (рамка) ձև, ձեռքով գաղտնակարի միջոցով կարել զգեստին:




Իրար միացնել երկու տոպրակացուները, մկրատի միջոցով հավասարեցնել, բլանդել մինչև եռանկյունները:



Բլանդել աստառացու գործվածքից կարված տոպրակացուի կողմից կողային և ներքևի կտրվածքները, մեքենակարել՝ սկսելով և վերջացնելով եռանկյուններից: Եթե դուք կարում եք վերարկու, տոպրակացուների եզրերը պետք է մաքրակարել օվերլոկով: Աստառով բաճկոնների դեպքում տոպրակացուի եզրերը մաքրակարել պետք չէ, քանի որ այն մնում է աստառի տակ:



Վերարկուի շիտակ կողմից տերևիկը կարել ձեռքով ինչպես ցույց է տրված նկարում: Պատրաստի գրպանը տերևիկի հետ միասին ենթարկել ջերմախոնավային մշակման:



Գոյություն ունի տերևիկի կարճ կողմերի կարման երկու տարբերակ.

- 1) Կարել ձեռքով գաղտնակարի միջոցով,
- 2) Մեքենակարել կարճ կողմերը՝ եզրից 1մմ հեռավորությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գործվածքներ են հարկավոր մանկական զգեստներ կարելիս:
2. Կառուցել տարբեր տարիքային խմբերի չափերի աղյուսակը:
3. Կատարել մանկական թեթև հագուստների էսքիզներ:
4. Կատարել չափափորձ, նախագծել մանկական հագուստ՝ ըստ ընտրած մոդելի:
5. Ձևել մանկական թեթև հագուստ, կատարել չափափորձ:
5. Մշակել վրադիր տերևիկով գրպան:

Օգտագործված գրականություն

1. Серия книг журнала Ателье, Платья и блузки, М. Мюллер и сын, 2007г.
2. Швея портной легкой женской одежды, Ростов–на–Дону, Еникс, 2000г.
3. Единый метод конструирования одежды, М. ЦОТШЛ; 1990г.
4. Материаловедение швейной производства. Калмыкова Е.А., Лобацкая О. В. Минск, «Вышэйшая школа», 2001г.
5. Лин Жак, «Техника кроя», М., Легпромбытиздат, 1986г.
6. Հյուսք և կար, «ԿԱԻՍԱ» հրատարակչություն, Երևան, 1993թ.
7. Սպասարկման աշխատանքներ, Լ.Վ. Գասպարյան, Լ.Խ. Արմաղանյան, «Լույս» հրատարակչություն, 1985թ.
8. Տնարարություն, Օ.Խ. Աղայան, «Լույս» հրատարակչություն, 1965թ.:
9. Կար ու ձև, Ն. Նեչանա , Երևան, 1964թ.:
10. Կար ու ձևի ձեռնարկ, Օրդյան, Երևան, 1960թ.:
11. Կանացի զգեստների կար ու ձևի ձեռնարկ, Հ. Ղասաբյան, Երևան, 1961թ.:
12. <http://portnishka.tv/>
13. <http://rukodelnica.ho.ua/>
14. <http://www.liveinternet.ru/>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....	3
-----------------	---

ԳԼՈՒԽ 1

ԿՆՈՋ ՎԵՐՆԱՇԱՊԻԿ

1.1. Վերնաշապիկի առաջացման պատմությունը.....	4
1.2. Կնոջ վերնաշապիկի և բլուզի էսքիզավորում և նախագծում.....	7
1.3. Կնոջ բլուզի (վերնաշապիկի) հիմքի և ձևաթղթերի կառուցում	11
1.4. Մեկ կարանի թևի և կանգունակով օձիքի գծագրեր	15
1.5. Բազկակալի մշակման հաջորդականությունը.....	21
1.6. Կանգունակով օձիքի մշակման հաջորդականությունը.....	26
1.7. Վերնաշապիկի մոդելավորում.....	40
1.7.1. Փողկապով ամառային բլուզ.....	40
1.7.2. Փոքրիկ թևիկներով վերնաշապիկ.....	44

ԳԼՈՒԽ 2

ԿՆՈՋ ՇՐՋԱԶԳԵՍ

2.1. Շրջազգեստի առաջացման պատմությունը.....	47
2.2. Կնոջ շրջազգեստի հիմքի և ձևաթղթերի կառուցում.....	52
2.3. Շրջազգեստի մոդելավորում.....	68
2.3.1. Բարձր իրանով շրջազգեստ.....	68
2.3.2. Գոտկատեղն ընդգրկող շրջազգեստ.....	71
2.4. Գաղտնի շղթայի մշակման հաջորդականությունը.....	75

ԳԼՈՒԽ 3

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԵԹԻՆ ՀԱԳՈՒՍ

3.1. Մանկական երկտակ կիսաարև կիսաշրջազգեստ.....	83
3.2. Նախադպրոցական տարիքի մանկական շրջազգեստ.....	86
3.3. Դպրոցական տարիքի տղայի տաբատ.....	92
3.4. Դպրոցական տարիքի տղայի վերնաշապիկ.....	100
3.5. Տղայի բաճկոնակ.....	105
3.6. Վրադիր տերևիկով գրպանի մշակման հաջորդականությունը.....	108

Ք. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԵՐՁԱԿ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հրատարակչական աշխատանքները՝ Մարիամ Պետրոսյանի

Սրբագրիչ՝ Գոհար Ամիրբեկյան

**Ստորագրված է տպագրության 17.12.2014թ.: Ծավալը՝ 7.5 մամուլ:
Ֆորմատ՝ 70x100 ¹/₁₆: Տպաքանակը՝ 100 օր.:
«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67,
հեռ.՝ 57 48 20:**